

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԹԱՓԱՆՑԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՍԱԿԱՅՆ ԹԵՐԱՅԱԲԱՏ Է

Եւրոպական ժողովրդավարական Կուսակցության (ԵԺԿ) քաղաքական համագումարին մասնակցող ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան, անդրադառնալով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն՝ ըսած է. «Մենք նպատակ ունենք անցկացնել ամենաթափանցիկ եւ արդար ընտրութիւններն անկախ Հայաստանի քանամեայ պատմութեան ընթացքում»:

Այս հարցով վարչապետը կարեւոր համարած է ընտրական նոր օրէնսդիրքը եւ հանրային ծառայութիւններու մասին օրէնքը, որ թափանցիկ պիտի դարձնէ պետական պաշտօնեաներու գործունէութիւնը: Կառավարութեան ղեկավարը ԵԺԿ քաղաքական համագումարի ընթացքին խօսած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան Եւրոպական ընդելուզման քաղաքականութեան, ինչպէս նաեւ իշխող՝ Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան ԵԺԿ-ին անդամակցութեան հեռանկարներուն մասին:

Խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմութեան ներկայացուցիչները, «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցներու ընթացքին, անդրադարձած են վարչապետ Տիգրան



ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան

Սարգսեանի կատարած յայտարարութեան:

Ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի եւ «Ժառանգութեան» ներկայացուցիչները վստահ չեն, որ իշխանութիւնները պատրաստ են ազատ, արդարեւ եւ թափանցիկ ընտրութիւններ կատարելու:

«Ժառանգութեան» ղեկավար անդամ, Ազգային ժողովի պատգամաւոր Արմէն Մարտիրոսեան կարծիքով, իշխանութեան քայլերը յուսադրող չեն. - «Ընդամէնը մի քանի օր առաջ ազատ, լաւ

Շաբ.ը էջ 5

## ՄԵԾ ՀԱՅԱՍՏԻ ՆԱՆՍԵՆԻ ԱՐՉԱՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Նորվեկացի նշանաւոր բեւեռախոյզ, մեծ մարդասէր, Հայ ժողովուրդի բարեկամ, խաղաղութեան Նոպէլեան մրցանակակիր Ֆրիտէոֆ Նանսէնի արձանը տեղադրուեցաւ Երեւանի սրտին:

Նոյեմբեր 9-ին տեղի ունեցած բացման արարողութեան ներկայ էին նախագահ Սերժ Սարգսեան, Հայաստանի եւ Նորվեկիոյ արտաքին գործոց նախարարները եւ Ֆրիտէոֆ Նանսէնի թոռնուհի՝ Մարիոլ Կրեւը, որ յոյս յայտնեց, որ Հայաստան կատարած իր առաջին այցելութիւնը հիմք պիտի դառնայ Հայ ժողովուրդի հետ իր բարեկամութեան:

«Ես առաջին անգամ է Հայաստան կու գամ եւ դեռ չեմ հասցուցած շատ բան տեսնել, սակայն ընդունելութիւնը, որուն արժանացայ, գերազանցեց բոլոր սպասելիքներս: Ինձի համար անսպասելի էր, որ մեծ հօրս արձանի բացումը



Ֆրիտէոֆ Նանսէնի արձանը Երեւանի մէջ

այսպիսի մեծ իրադարձութեան պիտի վերածուի, որուն ներկայ պիտի ըլլայ նոյնիսկ հանրապետ

Շաբ.ը էջ 5

## ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՇՆՈՐՀԻԻ ԻՐ ՍՓԻՒՔԻ



Իրանի արտաքին գործերու նախարար Ալի Աքպար Սալեհի եւ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի մամուլային ժամանակ

Հայաստան ու Իրան տարածաշրջանային եւ միջազգային հարցերու շուրջ շատ մօտ տեսակետներ ունին: Այս մասին յայտարարեց Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Ալի Աքպար Սալեհի Նոյեմբեր 8-ին, Երեւանի մէջ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպման յաջորդած համատեղ ասուլիսին՝ աւելցնելով, որ մտքերու մօտ ըլլալը կրնայ նպաստել, որ իւրաքանչիւրը ունենայ իր դերակատարութիւնը առկա ինդիքներու լուծման ուղղութեամբ:

«Կարեւոր է, որ մենք նոյն մտքերը ունինք, շատ մօտ են մեր

տեսակետները շատ ինդիքներ վերլուծելու հարցով», - ըսաւ Սալեհի՝ աւելցնելով, որ Հայաստան շատ իւրայատուկ կարգավիճակ ունի աշխարհի մէջ:

«Կը թուի, թէ Հայաստան փոքր պետութիւն է, բայց ան շատ մեծ ազդեցութիւն ունի աշխարհի մէջ, շնորհիւ այն համայնքներուն, որ ունի աշխարհի աւելի քան հարիւր երկրներուն մէջ: Այդ մարդիկ Հայաստանի դեսպաններն են աշխարհի մէջ, բայց անոնք կը նպաստեն, որ Հայաստանի ազդեցութիւնը միջազգային ասպարէզի մէջ մեծ ըլլայ: Յոյս ունինք՝ այդ

Շաբ.ը էջ 5

## ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ԴԵՍ ԵՆ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻՆ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան խումբ մը անդամներ պահանջած են արգելափակել արդիական գէնքերու վաճառքը Թուրքիային՝ Հայաստանի, Իսրայէլի եւ Կիպրոսի նկատմամբ Անգարայի վարած քաղաքականութեան պատճառով:

Գոնկրէսականներ Շելի Պըրքլի (Դեմոկրատ, Նեպատա նահանգէն) եւ Էլիոթ Էնկըլ (Դեմոկրատ, Նիւ Եորքէն) կոչ ըրած են Ներկայացուցիչներու Տան մնացեալ անդամներուն, արգելափակելու Սպիտակ Տան մտադրութիւնը՝ Թուրքիային վաճառելու «Գոպրա» տեսակի մարտական ուղղաթիւներ:

Դեմոկրատ օրէնսդիրներու նախաձեռնութեան միացած են առաջիկա եօթը գոնկրէսականներ՝ եւ՝ Հանրապետական, եւ՝ Դեմոկրատ կուսակցութիւններէն:

«Վերջին ամիսներուն Թուրքիան ետ կանչեց Իսրայէլի իր դեսպանը, սպառնաց ռազմածովային ուժեր կիրառել Իսրայէլի պաշտպանութեան բանակի դէմ: Թուրքիոյ ռազմատեսչ մօտեցումը Կիպրոսի հանդէպ եւս կը սաստ-

կանայ: Թրքական 40-հազարանոց ստորաբաժանումը կը շարունակէ մնալ Կիպրոսի մէջ՝ վերածելով գայն աշխարհի հաւանաբար ամենառազմականացուած գօտիներէն մէկուն: Թուրքիան կը խուսափի ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը», - իրենց նամակին մէջ արձանագրած են գոնկրէսականները, աւելցնելով թէ, պաշտօնական Անգարան Իրանի եւ Սուրիոյ պարագային նոյնպէս սեփական իր խաղը կը խաղայ, հարուածելով տարածաշրջանէն ներս ամերիկեան շահերուն:

«Մենք համոզուած ենք, որ այժմ Թուրքիային գէնք վաճառելու ժամանակը չէ: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որոնք կը ստիպեն Թուրքիան վերանայիլ դրացիներու հանդէպ որդեգրած առճակատման քաղաքականութիւնը», - կը շեշտեն գոնկրէսականները:

Ամերիկացի օրէնսդիրներու այս կոչը կու գայ այն պահուն, երբ Թուրքիա սկսած էր յայտարար

Շաբ.ը էջ 4





ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ 2012-Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏՃԵՆ ԱՆՈՒԱՆԵՑ ԱՆԿԱՐՈՂ ՊԻՏՏՃԵ

«Չունինք յետճգնաժամային անվտանգութեան բարձրիկներ այս պիւտճէի մէջ»,- այսօր լրագրողներու հետ հանդիպման ընթացքին ըսաւ «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Արմէն Մարտիրոսեան:

Ըստ անոր՝ կառավարութիւնը «հանդէս եկաւ աղմկոտ դրոշմներով», թէ յաջորդ տարի 101 միլիարդ դրամ աւելի շատ հարկեր պիտի հաւաքեն: «Հաշուի առնելով գնաճն ու տնտեսական անկումը, այդ ամէնը սպասելի է եւ վարչական մեծ խիզախութիւն չի պահանջում, եւ մինչնաշանակ է, որ այն ստուերը, որ կայ, պահպանուելու է»,- համոզուած յայտնեց պատգամաւորը:

Կառավարութիւնը կը նախատեսէ նոր «փրօկըսիւ» հարկ՝ շքեղութեան հարկ: «Ուրախալի է, որ Հայաստանի մէջ կայ պատրաստակամութիւն՝ անցնելու յառաջընթացային հարկի, քանի որ զարգացած երկրներու մէջ երկար ժամանակ է կը կիրառեն այդ հարկատեսակը, սակայն այդ մէկը դեռ կիսաքայլ է, քանի որ շքեղութեան հարկով շքեղ մեքենաները հարկ պիտի տան, իսկ շքեղ առանձնատուները՝ ոչ, մինչ կան առանձնատուներ, որոնք տասնապատիկ աւելի կ'արժեն քան այդ մեքենաները: Այնպէս որ, այստեղ լիարժէք քայլ պէտք է կատարուէր եւ այդ հարկատեսակը պէտք է վերաբերէր նաեւ շէնք-շինութիւններուն»,- նշեց Մարտիրոսեան:

Ան նկատեց, որ յաջորդ տարուան պիւտճէյի մէջ մեծ ծաւալ կը կազմեն անուղղակի յարկերը՝ 50 տոկոսէն աւելի, իսկ այդ մէկը կը նշանակէ, որ անուղղակի յարկերը պիտի տանք մենք բոլորս գլխաւորաբար մեր գրպանէն, ոչ թէ մեր եկամուտներէն:

Արմէն Մարտիրոսեան ըսաւ, որ կառավարութեան անդամները ճիշդ չեն ներկայացներ պիւտճէն,



«Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Արմէն Մարտիրոսեան

զայն կը համարեն կայունացման, զարգացման պիւտճէ, այնինչ գնաճի եւ ցած աշխատավարձի պայմաններու մէջ կայունութիւն չկայ:

«Այս պիւտճէն նոյնիսկ գոյատեւման պիւտճէ չէ, գան կարելի է բնութագրել՝ եղունգ ունիս՝ գլուխը քերէ: դարձեալ տնային տնտեսութիւնը պիտի պահեստաւորեն միջերբը, որ քիչ թէ շատ թեթեւ տանեն սպասուող վիճակը: Աշխատավարձ չբարձրացնելու եւ նման գնաճ ունենալու պարագային ես այս պիւտճէն կ'անուանեմ անկարող պիւտճէ: Ես չեմ գտներ, որ սա ընկերային պիւտճէ է, աւելցած թոշակները կաթիլ մըն են մէկ բաժակ ջուրի մէջ, այդ մէկը նոյնիսկ պարենային զամբիւղը չ'ապահովեր, եւ նման պայմաններու մէջ աշխատավարձի բարձրացում չի սպասուիր՝ բացառութեամբ քատասդրի ոլորտի»,- ըսաւ ընդդիմադիր պատգամաւորը:

ԱՐՏԱԳԱՂԹԻ «ԾԱՆՐ» ՑՈՒՑԱՆԻՇ ՈՒՆԵՆՔ

Ազգային վիճակագրական ծառայութիւնը շարունակում է լաւատեսական թուեր հրատարակել արտագաղթի վերաբերեալ: Այսպէս, ԱԿԾ տուեալներով, այս տարուային ամիսներին բնակչութեան բնական յաւելածի եւ միգրացիայի մնացորդի ցուցանիշներով ՀՀ մշտական բնակչութեան թուաքանակը տարեկան համեմատ աւելացել է 7.4 հազար, իսկ 2010 թ. հոկտեմբերի 1-ի համեմատ՝ 10.9 հազար մարդով:

Տնտեսագէտ Բագրատ Ասատրեանը պաշտօնական վիճակագրութիւնը մէկ բառով «ցաւալի» է անուանում: «Հաշուառման կանոններն այնպիսին են, որ ճշգրտութեան աստիճանը ցածր է: Մարդահամարը իրական պատկերը ցոյց կը տար, բայց, ցաւոք, մարդահամարի որակը շատ ցածր է»,- Lragir.am-ին

ասաց Բագրատ Ասատրեանը: Նրա խօսքով, արտագաղթի «ծանր» ցուցանիշ ունենք: «Այս տարի երրորդ հազարամեակում արտագաղթի ամենաբարձր տուեալներն ենք ունենալու: 2011 թուականն այդ իմաստով բացառիկ է լինելու»,- նշեց տնտեսագէտը:

Բագրատ Ասատրեանի կանխատեսումներով, այս տարի, նախորդ տարուայ համեմատ, ծնունդների իրական թիւը մօտ 10 տոկոսով կը կրճատուի, իսկ մահերը, բնականաբար, աւելանում են: Աւելին, տնտեսագէտը առաջիկայ 5 տարիների համար մահուան գործակցի աւելացում է կանխատեսում:

Նշենք, որ պաշտօնական վիճակագրութեան համաձայն, այս տարուայ ինն ամիսներին ծնունդների թիւն արդէն իսկ նուազել է 2.9%-ով:

ԱՄՆ-Ի ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազօր դեսպան Զոն Հեֆերնը հանդիպել է ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի ղեկավար, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ:

Ինչպէս հաղորդում է ՀԱԿ-ը, հանդիպման ընթացքում Տէր-Պետրոսեանը ներկայացրել է Հայաստանի ներքաղաքական վիճակի վերաբերեալ ՀԱԿ-ի տեսակէտները, մասնաւորապէս «անդրադարձ է կատարել Հայաստանում տիրող համակարգային կոռուպցիային, ժողովրդավարական ազատութիւնների բացակայութեանը, կեղծուած ընտրութիւններին, լրատուամիջոցների ազատութեան սահմանափակումներին եւ որպէս պատճառ հետեւանք՝ Հայաստանին սպառնացող լրջագոյն մարտահրաւէրներին՝ յատկապէս նշելով ահազնացող արտագաղթ

թի խնդիրը»: «Որպէս Հայաստանի առջեւ ծառայած խնդիրների լուծման բանալի, նախագահ Տէր-Պետրոսեանը ընդգծել է օրինական ընտրութիւնների անցկացման ապահովումը եւ օրինակարգ իշխանութիւնների ձեւաւորումը», - ասում է ՀԱԿ-ի տարածած հաղորդագրութեան մէջ:

ՀԱԿ-ի առաջնորդը ներկայացրել է նաեւ ՀԱԿ-ի մօտեցումները Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ:

Հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ դեսպանութեան քաղաքական հարցերով պատասխանատու Քրիստոֆեր Անդերսենը եւ ՀԱԿ-ի կենտրոնական գրասենեակի անդամներ Լեւոն Զուրաբեանը եւ Աւետիս Աւագեանը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»-Ի ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԼԱՆՔԸ ՓՈՒՍԱՐԻՆՈՒԵՑ ԳՈՅՔԻ ԿԱԼԱՆՔՈՎ

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը երեքշաբթի օրը ձեւափոխել է իր որոշումը՝ վերացրել է «Հրապարակ» օրաթերթի դրամական հաշիւների վրայ դրած կալանքը եւ կալանք դրել օրաթերթի գոյքի վրայ: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց թերթի գլխաւոր խմբագիր Արմինէ Օհանեանը:

«Հրապարակ»-ի կրկին յայտնուել է դատական քաշքշուկների մէջ: Թերթին այս անգամ դատի է տուել փաստաբան Արթուր Գրիգորեանը:

Փաստաբանը գտնում է, որ օրաթերթի էլեկտրոնային տարբերակում դեռեւս օգոստոսին սպաքուած յօդուածի ներքոյ ընթերցողների թողած մեկնաբանութիւնները վիրաւորել են իր պատիւն ու արժանապատուութիւնը:

Յօդուածը փաստաբանի ծառայութիւններից դժգոհ մնացած քաղաքացիների բողոքի մասին է: Յօդուածի վերաբերեալ մեկնաբանութիւն թողած 6 քաղաքացիներից մի քանիսը իրենց մեկնաբանութիւններում եւս բողոքել են փաստաբանի գործողութիւններից: Նրանցից մէկը գրել է. - «Արթուր Գրիգորեանին պատճառով կորցրեցինք բողոքարկելու իրաւունքը՝ գոտ իր բողոքը ուշացնելու պատճառով»: Մէկ այլ ընթերցող էլ



«Հրապարակ»-ի գլխաւոր խմբագիր Արմինէ Օհանեան

չի շեղել է իր գործը՝ գրելով. - «Մեր գործով նոյն սցենարով սկզբից պայմանազիր կնքեց 150 հազար դրամի, յետոյ վերջում՝ 600 հազար դրամի հասցրեց ու ընդամէնը փորձեց հարցը դատաւորի հետ միջնորդութեամբ լուծել»:

Ընթերցողների մեկնաբանութիւնների համար փաստաբանը թերթից 18 միլիոն դրամ (շուրջ 47 հազար դոլար) է պահանջում:

«Հրապարակ»-ի գլխաւոր խմբագիրը աննախադէպ է համարում այս գործը նրանով, որ իրենց մեղադրում են ընթերցողների կարծիքները սպաքելու համար:

Սա «Հրապարակ»-ի դէմ արդեն վեցերորդ դատական գործն է: Աւելի վաղ թերթին դատի է տուել նաեւ Ռոբերտ Քոչարեանը:

ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ 2012Ի ՊԻՏՏՃԵՆ ԿԸ ԿԱԶՄԵ 712.200 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Նոյեմբեր 4ին ելեւմտական փոխնախարար Պաւել Սաֆարեան Ազգային ժողովին սփիւռքի, մշակույթի, կրթութեան եւ գիտութեան նախարարութիւններու 2012ի պիւտճէի քննարկման ընթացքին տեղեկացուց, որ գալիք տարուան պիւտճէին նախարարութեան պահպանման ծախսերը մնացած են նոյն մակարդակին: Ան տեղեկացուց, որ 2011ին սփիւռքի նախարարութեան պիւտճէն կազմած է 454 միլիոն դրամ, 2012ին՝ 496 միլիոն, որ առնչուած է համահասկական փառատօնի իրականացման ծախսերը աւելցնելու հետ: Միայն այդ փառատօնի համար անհրաժեշտ է 84 միլիոն դրամ լրացուցիչ գումար:

Սփիւռքի նախարար Հրանտշ Ծակոբեան ներկայացուց այն աշխատանքները, զորս նախարարութիւնը իրականացուցած է այս տարի, եւ ընդգծեց 2012ի իրենց առաջարկները:

Ան տեղեկացուց, որ նախարարութիւնը Սփիւռքի ամառնային համալսարան ստեղծելու առաջարկ ներկայացուցած է:

Պիտի իրականացուին նաեւ կրթամշակութային ծրագրեր ԱՊՀ երկրներու մէջ:

Հ. Ծակոբեան նշեց, որ 2011ին կազմակերպած է 24 համաժողով, միւս տարի նախատեսուած է շարունակել գանձի, մասնաւորապէս պիտի իրականացուին հայագէտներու,

լրագրողներու, ճարտարապետներու համաժողովներ. «համաժողովներն արդէն լինելու են աւելի գործակցային, եթէ այս տարի ճարտարապետների համաժողովը հիմնականում ճանաչողական է, ապա գալիք տարի մասնակից ճարտարապետներն արդէն ներկայացնելու են իրենց աշխատանքները»:

Ծակոբեանը տեղեկացուց, որ Հանրայինի եթերով հեռարձակուող «սփիւռքի ժամ» հաղորդաշարը պիտի շարունակուի նաեւ միւս տարի, եւ այդ նպատակով պիւտճէով նախատեսուած են որոշակի գումարներ:

Ան նշեց, որ այս տարի կ'աւարտին նաեւ էլեկտրոնային թանգարանի աշխատանքները:

2012ի «Արի տուն» ծրագրով եւս նախատեսուած է 800 երիտասարդի մասնակցութիւն, ինչպէս այս տարի: Հրանտշ Ծակոբեան նշեց, որ հնարաւորութիւն կար այս տարի ընդլայնելու այս ծրագրի մասնակիցներու թիւը, սակայն կային նիւթական որոշ խնդիրներ: Ան նշեց, որ կը ցանկանար՝ աւելացուէր «Արի տուն» ծրագրի պիւտճէն՝ աւելցնելով, որ պէտք է աւելի մեծ ուշադրութիւն դարձուի նաեւ ամառնային դպրոցի գործունէութեան:

Նախարարը նաեւ նկատեց, որ շարունակութիւն պիտի ունենայ հայրենադարձութեան ծրագիրը:



# ԼՈՒՐԵՐ

## ՍԿՍՈՒԵԼ Է ՔԵԼԲԱԶԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՆՈՂ ԳԱՆԱՊԱՐՅԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Սա Ղարաբաղը Հայաստանին միացնող երկրորդ ճանապարհը կը լինի՝ 150 կիլոմետրով կարճ, քան գործող Գորիսով անցնող մայրուղին:

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանի խօսքով, այս ճանապարհի շինարարութեան մեկնարկը ամենամեծ յաղթանակներից մէկն է Ղարաբաղի անկախացումից ի վեր:

Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները այս նոր, ռազմավարական նշանակութիւն ունեցող ճանապարհի հետ մեծ յոյսեր են կապում, մասնաւորապէս՝ Քելբազարի շրջանի զարգացման առումով:

Շինարարութիւնն իրականացուած է բարեգործական միջոցներով, մասնաւորապէս, Լեռնային Ղարաբաղում հանքարդիւնաբերութեամբ զբաղուող «Բայա մեթըլը» ընկերութեան ֆինանսական աջակցութեամբ: Հետագայում յատկացուելու են նաեւ պետական միջոցներ:

«Կախուած չենք լինելու միայն Գորիս-Ստեփանակերտ ճանապարհից, տնտեսական առումով նոր խթան է հանդիսանալու շրջանի զարգացման համար, նաեւ մեր հանքարդիւնաբերութեան զարգացման տեմպերին գուզահեռ այս ճանապարհը իր նշանակութիւնն է ունենալու»,- ասաց Լեռնային Ղարաբաղի վարչապետ Արա Յարութիւնեանը:

Քելբազարը Գեղարքունիքի մարզին միացնող այս ճանապարհով կ'անցնեն բեռնատար եւ մարդատար ավտոմեքենաների մեծ մասը: Կառուցուող ճանապարհով կ'ար-

տահանուի նաեւ Լեռնային Ղարաբաղի հանքարդիւնաբերական արտադրանքը:

Քելբազարի բնակիչներն անհամբերութեան են սպասում ճանապարհի բացմանը:

«Արդէն համոզուած ենք, որ մեր դրութիւնը մի քիչ կը բարելաւեն», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց տեղացի մի կին:

«Այդ խորհուրդը ճանապարհներով մինչեւ հասնում էինք Վարդենիս, հետ էինք գալիս, մի 6-7 ժամ անցնում էր: Հիմա եթէ նորմալ սարքեն, ասֆալտապատեն, երեւի 30 րոպէսով կը հասնենք Վարդենիս», - յաւելեց միջին տարիքի մի տղամարդ:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Քելբազարի շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Պիոտր Յակոբեանը ասաց. - «Կլոր տարին ճանապարհը գործելու է: Եւ այդ ճանապարհի բացումը կը խթանի մեր շրջանի տնտեսութեան զարգացումը: Ոչ միայն գիւղատնտեսութեան, նաեւ՝ որոշ չափով արդիւնաբերութեան, որոշ չափով՝ անհատ ձեռներէցութեան»:

Ճանապարհի կապիտալ շինարարութիւնը կը տեւի մօտ երկու տարի, իսկ մինչ այդ գալիք Փետրուար-մարտ ամիսներին այն կը սկսի գործել, քանի որ Մարդակերտի շրջանի Մարդուզի քարածուխի հանքը նոյնպէս շահագործման կը յանձնուի այդ ամիսներին, եւ այս ճանապարհը կոչուած է նաեւ հեշտացնելու այդ նախագծի իրականացումը:

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՎԻՐԱԴՈՐՈՒՄ ԵՆ

Երուսաղէմի հայկական եկեղեցու հոգեւորականները նշում են, որ իրենց վրայ յարձակումներ են գործում ուլտրա-ուղղափառ խմբաւորումների ներկայացուցիչները, սկսած աւագ կարգի նախններից, աւարտած հոգեւոր հաստատութիւնների ուսանողներով: Երբ նրանք բողոք են ներկայացնում, ոստիկանութիւնը սովորաբար չի գտնում: Այս թեմային է անդրադարձել իսրայէլական Հաարեց պարբերականը: Ուլտրա-ուղղափառ հրեայ երիտասարդները հայհոյում ու թքում են քրիստոնեայ հոգեւորականների վրայ Երուսաղէմի Հին քաղաքում: Շատ դէպքերում հոգեւորականներն անտեսում են յարձակումները, սակայն երբեմն նրանք պատասխան հարում են հասցնում: Անցեալ շաբաթ Երուսաղէմի դատարանը չեղեալ է յայտարարել հայ հոգեւորական ուսանողի նկատմամբ կայացրած վճիռը, ով հարուածել էր իր վրայ թքողին:

Յովհաննէս Մարատերսեանը 2008թ մայիսին քայլում էր Հին քաղաքով, երբ մի հրեայ թքեց նրա վրայ: Յովհաննէսը հարուածել է իր վրայ թքողի դէմքին եւ դատաւարուել է յարձակման մեղադ-

րանքով: Դատաւորը, ով անսպասելիօրէն չեղեալ է յայտարարել վճիռը, իր վճռում նշել է, որ Յովհաննէսին մէկ հարուածի համար դատաւարտելը այն դէպքում, երբ նրա վրայ պարբերաբար թքել ու ստորացրել են, հակասում են հիմնարար սկզբունքներին:

Երուսաղէմի հայկական պատրիարքութեան գլխաւոր թարգման Գուսան Ալջանեանն ասում է, որ շատ յաճախ դժուար է երիտասարդ հոգեւորականների համար կուլ տալ վիրաւորանքները: Նրա խօսքով, մէկ ամիս ատաղ էլ 2 ուսանողներ հարուածել են իրենց վրայ թքողին եւ հեռացուել են Հին քաղաքից 2 շաբաթով:

Մի քանի շաբաթ առաջ էլ թաղման արարողութեան ժամանակ թքել են Հայկական եկեղեցու սպասաւոր հայր Ալբերտոյի վրայ: Գուսան Ալջանեանը նշում է, որ այդ ուլտրա-ուղղափառ հրեաները ֆանատիկ Հարեդի խմբաւորման անդամներ են, որոնք չեն ներկայացնում հասարակութեանն ընդհանուր առմամբ:

Նման յարձակումների են ենթարկուած նաեւ յոյն ուղղափառ հոգեւորականները:

## ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄ ԾԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՅԱՆՁՆՈՒԵՑ «ԶՈՒԱՐԹՆՈՑ»-Ի ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐԱՅԱՄԱԼԻՐԸ



Երկուշաբթի, Նոյեմբեր 7-ին առաջին ուղեւորներին սպասարկեց «Զուարթնոց» օդանաւակայանի մեկնման նոր սրահը: Այսպիսով օդանաւակայանի նոր շէնքը սկսեց գործել ամբողջութեամբ:

Օդանաւակայանի նոր շէնքի պաշտօնական բացումը, յիշեցնենք, տեղի էր ունեցել սեպտեմբերին՝ նախագահ Սերժ Սարգսեանի մասնակցութեամբ: Դրանից մօտ մէկ ամիս անց սկսել էր գործել ժամանման սրահը:

Այսօր մեկնման նորաբաց սրահից առաջինը մեկնեցին Երեւան - Սանկտ Պետերբուրգ չուերթի ուղեւորները:

Օդանաւակայանի նոր շէնքի շինարարութիւնը սկսուել էր 2008 թուականին եւ աւարտուել է նախատեսուած ժամկէտում. 34 հազար քառակուսի մետր ընդհանուր տարածք ունի, ներդրուել է 160 միլիոն ԱՄՆ դոլար:

Նոր համալիրի 1500 աշխատակիցների եւ 46 հաշուառման սեղանների շնորհիւ հնարաւոր կը լինի տարեկան սպասարկել շուրջ 3.5 միլիոն ուղեւորի:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք իրեն չի մտահոգում արտագաղթը եւ այն, որ մեկնման նոր սրահը «հեռացող հայի» խորհրդանիշն է, «Արմենիա միջազգային օդանաւակայաններ» ընկերութեան սեփականատէր, արգենտինահայ մեծահարուստ եւ բարերար Էդուարդո Էռնեսկեանը պա-

տասխանեց. - «Արտագաղթը ժամանակաւոր բնույթ է կրում, եւ նման օդանաւակայան ունենալը հնարաւորութիւն է տալիս նաեւ նոր աշխատատեղեր ստեղծել»:

«Զուարթնոց»-ի գլխաւոր մենջերի տեղակալ Անդրանիկ Շիսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ իրենց մօտաւոր հաշուարկներով մեկնողներն աւելի շատ են, քան ժամանողները. - «Անցած տարուայ ուղեւորահոսքը եղել է 1 միլիոն 600 ուղեւոր, որոնց 50 տոկոսից մի փոքր աւելին եղել են մեկնող ուղեւորներ»:

Նրա խօսքով, նոր համալիրը կ'ունենայ նաեւ այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք աւելի յարմարաւէտ կը դարձնեն ուղեւորների սպասարկումը. - «Նախատեսում ենք, որ մօտակա ժամանակներս կարողանանք ունենալ արդէն ինքնահաշուառման տաղաւարները՝ self check-in-ները: Ներկայումս քննարկումներ ենք անցկացնում աւիաընկերութիւնների հետ»:

Էդուարդո Էռնեսկեանը յոյս յայտնեց, որ նոր ուղեւորահամալիրը աւելի շատ զբօսաշրջիկներ կը ներգրաւի Հայաստան. - «Հայաստանը պէտք է ունենայ լաւագոյնը, եւ մենք կ'անենք հնարաւոր ամէն բան՝ դրան հասնելու համար»:

Նոր համալիրը, ինչպէս եւ խոստացուել էր, զարդարում է Մինաս Աւետիսեանի որմնանկարներից մէկը:

## ՄԵԾ ՀԱՅԱՍՏԻ ՆԱՆՍԵՆԻ ԱՐՁԱՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն  
տութեան նախագահը», - Tert.am-ի հետ զրոյցին նշեց տիկին Կրեւ:

Պաշտօնական այցով Հայաստան գտնուող Նորվեգիոյ արտաքին գործոց նախարար Եոնաս Կահր Շոէրթէն, իր հերթին նշեց. «Ինձի համար մեծ պատիւ է, որ իմ այցը կը համընկնի Նանսէնի 150ամեակին նուիրուած տօնակատարութիւններուն: Ան իրապէս մեծ մարդ էր եւ պատմութեան մէջ մնաց

յատկապէս փախստականներու համար իր ըրած գործերով: Վստահ եմ՝ իւրաքանչիւր նորվեգացի հպարտ պիտի զգայ իր հայրենակիցի արձանը քաղաքի ուղղակի սրտին տեսնելուն համար: Ես շատ սպաւորուած եմ Նանսէնի յիշատակը վառ պահելու համար Ձեր գործած ջանքերով, եւ կը կարծեմ՝ ասիկա ոչ միայն պիտի պահէ յիշատակը, այլեւ լաւ ուսուցում պիտի ըլլայ երիտասարդներուն համար», - ըսաւ ան:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ԴԵՍ ԵՆ

Շարունակուած էջ 1-էն  
րարել, թէ Ուաշինգթոնի հետ իր յարաբերութիւններու գծով դիւանագիտական յաղթանակի հասած է: Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրտողան վերջերս յայտարարեց,

որ նախագահ Պարաք Օպամայի վարչակազմի հետ համաձայնութիւն ձեռք ձգուած է, որ թոյլ կու տայ ամերիկեան «Փրիտէթըր» անօդաչու սարքերու օգտագործման՝ քուրդ գիւնեալներու դէմ իր մղած պայքարի ընթացքին:

massispost.com  
daily news updates



ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՓՈՒԹԻՆԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՌԴ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ՄՆԱՑԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԴԱԶԱԽՍՏԱՆԸ.

The Christian Science Monitor պարբերականը ծառայում է յոգուած հրապարակած է Ռուսաստանի Դաշնության վարչապետ Վլատիմիր Փուտինի որդեգրած արտաքին քաղաքական ուղեգիծին մասին:

Պարբերականը չատկապէս քննադատած է Փուտինի վարած կազային քաղաքականութիւնը՝ ընդգծելով, որ «Կազիրոմ» ընկերութիւնը Փուտինի ձեռքին դարձած է «ուժանիւթային զէնք»:

«Նոյեմբեր 8ին ուժանիւթի հակա «Կազիրոմ»ը կը սկսի կազի մատակարարումը «Հիւսիսային հոսք» խողովակաշարով, որ դարձած է Ռուսաստանն ու Գերմանիան ուղիղ կապող առաջին կազատարը: 1220 քլմ երկարութիւն ունեցող այդ խողովակաշարը, որ կ'անցնի Պալմիր քովու յատակով, դարձաւ ՌԴ վարչապետ Վլատիմիր Փուտինի անձնական յաղթանակը»,- կը գրէ պարբերականը:

Նշելով, որ «Հիւսիսային հոսք» Ռուսաստանի եւ Գերմանիոյ միջեւ պիտի դառնայ շատ վտանգաւոր համագործակցութեան հիմք, The Christian Science Monitor կը գրէ. «12,1 միլիարդ տոյրար արժողութեամբ այդ խողովակաշարը Եւրոպայի մէջ յառաջացուցած է լուրջ մտահոգութիւններ այն մասին, որ «Կազիրոմ»էն կախուածութիւնը աւելի պիտի մեծնայ:

Քննադատները կը պնդեն, որ «Հիւսիսային հոսք» Պեռլինի եւ Մոսկուայի միջեւ պիտի դառնայ վտանգաւոր դաշինքի հիմք, որ նման պիտի ըլլայ 1939ի Խորհրդային Միութեան եւ Նացիստական Գերմանիոյ միջեւ ստորագրուած Մոլոթ-Ռիպենտրոփ պայմանագրին»:

Պարբերականը միեւնոյն ժամանակ կը գրէ, որ «Կազիրոմ»ը «ուղղակի իտէլական իրտուհիակ է՝ հակալական, ազատ ընկերութիւն, որ միշտ կը դարձանակալէ անկիւնին»:

«Փուտինի ստեղծած «ուժանիւթային զէնքի» երեւոյթէն ազատուելու փորձարէն՝ «Կազիրոմ»ը հաճոյք կը ստանայ այդ երեւոյթէն: Սակայն այդ հրէշը տեսիլքային է եւ անիրական», - կը գրէ The Chris-

tian Science Monitor:

Ընդգծելով, որ ուսական ուժանիւթային քաղաքականութիւնը կ'ուղղորդեն նոր կայսերական փափաքները, պարբերականը կը գրէ. «Կազիրոմ»ին կը պատկանին արդէն պալթեան երեք երկիրներու ազգային կազային ընկերութիւններու բաժնետոմսերու 1/3րդ մասը, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Պելաուսիոյ խողովակաշարային ցանցերու առնուազն 50%ը: Եւ միայն Ուքրանիան է, որ յամառօրէն ետ կը մղէ «Կազիրոմ»ի յաւակնութիւնները իր խողովակաշարերուն նկատմամբ, որոնց միջոցով Ռուսաստանէն Եւրոպա կ'արտահանուի ուսական կազի 80%ը: Ուքրանիոյ նախագահ Վիքթոր Եանուզովիչ, որուն ընտրած էին անցեալ տարի՝ յոյսով, որ ան պիտի վերականգնէ Ռուսաստանի հետ վատթարացած յարաբերութիւնները, Մոսկուայի հետ կազի շուրջ յամառօրէն բանակցելու հարցով ամենեւին ալ չի գիշոր իր արեւմտամէտ նախորդը՝ Վիքթոր Եուչչենչոն»:

The Christian Science Monitor կը նշէ, որ Փուտինի վարած արտաքին քաղաքականութեան իրերեւորդիւնը՝ Ռուսաստան, բացառութեամբ Հայաստանի եւ Ղազախստանի, գրկուած է վստահելի դաշնակիցներէ:

«Փուտինի վարած աննրբանկատ արտաքին քաղաքականութեան պատճառով՝ Ռուսաստան մնացած է առանց վստահելի դաշնակիցներու, բացառութեամբ Հայաստանի եւ Ղազախստանի: Փուտինեան ինամաշահութեան կերպարը, որուն միջոցով ան կը ղեկավարէ Ռուսաստանը, վատ կ'անդրադառնայ միջազգային նախադիմերուն վրայ: Ան Գերմանիոյ նախկին քանցլըր Կերհարտ Շրէտտըրը նշանակած է «Հիւսիսային հոսք»ի ղեկավար՝ այդ կերպով փորձելով հասնիլ Արեւմուտքի կողմէ խողովակաշարի ձանաչման: Իսկ Շրէտտըր՝ իր կազիրոմեան պաշտօնին պատճառով՝ Գերմանիոյ մէջ վերածուած է ծիծաղի առարկայի»,- կը գրէ պարբերականը:

ԸՆԿ. ՏՕՔԹ. ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՅՑԸ

Երկուշաբթի Նոյեմբերի 7ին, 2011, երեկոյան ժամը 8:30ին Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի հետ հանդիպում մը ունեցաւ այս օրերուն, հիւրաբար քաղաքս գտնուող Լիբանանի Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Վարիչ Մարմնի անդամ եւ Ազգային Ազգային Բուժարանի բժշկապետ ընկ. Տօքթ. Մկրտիչ Պետրոսեան: Շուրջ մէկ ժամ տեւող սոցն հանդիպման ընթացքին յարգարժան հիւրը ծանօթացաւ մեր կառուցներուն եւ շահեկան տեղեկութիւններ տուաւ Լիբանանի եւ Սուրիոյ հայ գաղութներու կեանքի եւ դիմակալած դժուարութեանց ու մտահոգութիւններու մասին:

ԿԱՏԱՐՈՒԵՑ «ԳԱՐԵԳԻՆ Ա. ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Նոյեմբերի 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ «Գարեգին Ա.» հոգեւորկրթական կենտրոնի հիմնարկէքը: Կենտրոնը կառուցուած է Մայր Աթոռի բարեբարներ տէր եւ տրիկին Հայկ - Էլզա Թիթիգեաններին նուիրատուութեամբ: Ճարտարապետն է Արտաւազդ Նազարեթեանը:



Այնուհետեւ Նորին Սրբութեան հրաւերով բարերարներ Հայկ եւ Էլզա Թիթիգեանները յիշատակարանով պարկուճը գետեղեցին կառուցող կենտրոնի հիմքում: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնութիւնն ու գնահատանքը բերեց եկեղեցանուէր Թիթիգեան ամուսիններին:

Գոհաբանական աղօթքից ու կառուցող շէնքի հիմքերի օրհնութիւնից չետոյ ընթերցուեց այս առիթով կազմուած յիշատակարանը, որում մասնաւորաբար ասուած է. «...Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակներին՝ բարեպաշտ եւ ազգասէր Թիթիգեան ամուսիններու նուիրատուութեամբ կառուցուող այս կրթական կենտրոնը պիտի ծառայի եկեղեցականների եւ ուսուցիչների վերապատրաստութեան կարեւոր առաքելութեանը, աստուածաբանական, եկեղեցագիտական եւ հայագիտական խորհրդաժողովների անցկացմանը: «Գարեգին Ա.» կրթական կենտրոնի գործունէութիւնը կարեւոր ներդրում է լինելու նաեւ գիտութեան ապարհզի գարգացման, նշանակալի նոր ձեռքբերումների արձանագրման գործում:

...Թող Փրկիչ մեր Տէրը միշտ շէն ու պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի ազգիս բարերար զաւակներին եւ նորանոր յաջողութիւններ շնորհի Թիթիգեան ընտանիքի եկեղեցանուէր ձեռնարկներին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ

Մարտնադուած էջ 1-էն

ընտրութիւնների մասին խոստացող վարչապետը, որ Բրիւսելում նմանատիպ խօսքեր էր ասում, օրէնքին հակառակ, դպրոցներում կուսակցական տոմսեր էր բաժանում»:

Մարտիրոսեան ըսած է նաեւ, թէ «բուհերը քաղաքականացուած են, այդ հաստատութիւնների խորհուրդները ղեկավարում են բացառապէս պաշտօնատար անձինք»:

Անդրադառնալով նոր Ընտրական օրէնսգրքի բացերուն, պատգամաւորը ըսած է. - «Դա սողանցքներ չեն, դա լայն մայրողիներ են, որոնք հնարաւորութիւն են տալիս ցանկացած պարագայում ընտրակեղծիքների մեծ բազա կիրառել եւ ասել, թէ՛ դա մեզանից կախուած չէր: Ընտրական օրէնսգրքի շուրջ է իմ մտահոգութիւնը, որովհետեւ մեծամասնական ընտրակարգը մնաց, իսկ, որպէս օրէնք, հենց այդ բուհերի շուրջ, ընտրակաշառքը քողարկուած է մե-

ծամանական ընտրակարգի թեկնածուների անուան տակ: Գումարած դրան՝ քաջ յայտնի է, որ որեւէ մեծամասնական ընտրակարգում ընդդիմութիւնը ներկայացնող պատգամաւոր չի կարող ընտրուել՝ ֆինանսական խնդիրների պատճառով, որովհետեւ ընտրակաշառք է բաժանուած, իսկ ընդդիմութիւնը ընտրակաշառքից շատ հեռու է: Այս ամէնը ինձ, յամենայն դէպս այս պահի դրութեամբ, յոյս չի ներշնչում»:

Հայ Ազգային Գոնկրէսի ներկայացուցիչ, ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեան եւս անդրադարձած է վարչապետի խօսքերու ու ըսած. - «Կայ հիմակէս միլիոն աւելցուկ, որոնք Հայաստանում չեն քուէարկում, բայց ցուցակներում կան: Իշխանութեան կամքը ամբողջապէս բաւարար է այդ 500 հազար հոգուն ցուցակներից հանել եւ անցկացնել արդար ընտրութիւններ: Ու այն առաջարկները, որ ՀԱԿ-ը յստակ առաջարկել է իշխանութեանը՝ մատր թաթախելը, յաջորդ օրը

ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Մարտնադուած էջ 1-էն

ազդեցութիւնը կը նպաստէ, որ տարածաշրջանային հարցերը լուծուին եւ հաստատուի կայունութիւն ու խաղաղութիւն»,- ըսաւ ԻԻՀ ԱԳ նախարարը:

Հիւր նախարարի խօսքերով՝ Իրանը մեծ պետութիւն է, ունի տասնհինգ հարեւան, եւ աշխարհի բացառիկ երկիրներէն է, որ այդքան հարեւան ունի, ուստի քաղաքական ուղիմութիւն կը պահանջէ, որ դրացիներու հետ ունե-

նայ լաւ յարաբերութիւններ:

«Հարեւաններու հետ խաղաղութիւնը կ'ազդէ մեր երկրի անվտանգութեան եւ կայունութեան վրայ: Պէտք է բոլոր դրացիներու հետ ունենանք լաւ յարաբերութիւններ: Բոլոր հարցերը քննութեան կ'ենթարկուին եւ կողմերը լուծում կը գտնեն անոնց համար»,- ըսաւ Ալի Աքպար Սալէհի:

Նախարար Սալէհի նոյն օրը ընդունուեցաւ նաեւ նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ:

անուանական ցուցակները տպելը, ամբողջ օրը մոնիտորինգ անցկացնելը, ամէն տեղամասում գոնէ մէկական դիտորդի ներկայութիւն ապահովելը եւ մի քանի այլ պահանջները...: Առաջարկում եմ

վարչապետին, օգտուելով իր իրաւունքից՝ խօսքի տէրը լինելու իրաւունքից, անմիջապէս այս նշած կէտերի օրէնսդրական նախաձեռնութեամբ շատ արագ մտնել Ազգային ժողով եւ օրէնք դարձնել»:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՇԵԼԻ ԱՂԹԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԲԵՐՈՒ

### ԴՐԱՆՔ ԵՆ ՃՆՇՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

#### ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

Այն, ինչ այժմ տեղի է ունենում Հայաստանի իշխանական համակարգում, անշուշտ դժուար է պայմանավորել մեկ հանգամանքով, կամ մեկ-երկու հանգամանքով: Ինչ տեղի է ունենում, պետք է թերեւս որակել Սերժ Սարգսեանի արձագանքը իրավիճակին: Իսկ իրավիճակը բազմաշերտ է: Այն պետք է բաժանել երկու հարթուքների՝ ներքին եւ արտաքին: Այդ երկու հարթուքներում էլ «տեղաբաշխում» են իրավիճակի շերտերը:

Ներքին հարթուքում շերտերը կազմում են Հայ ազգային կոնգրեսը, տարբեր քաղաքացիական շարժումները, նախաձեռնություններն ու խմբերը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առկա գրեթէ չեղափոխական փոփոխությունները՝ համացանցային տեխնոլոգիաների զարգացումը, իշխանութեան ներսում առկա բազմաբեկ իրավիճակը, երբ ակնյայտորէն առկա է երկու թեւի մրցակցություն՝ այսպէս ասած իշխանութեան «նորաբնակներին» եւ «հնաբնակներին» մրցակցությունը, նրանց պայքարը իշխանութեան մէջ ազդեցիկ եւ որոշիչ դերակատարութեան համար:

Որքան էլ Հայ ազգային կոնգրեսի հանրային վարկանիշը նուազել է, որքան էլ թուլացել է մոբիլիզացիոն ներուժը եւ կոնգրեսն այսօր ոչ միայն համաժողովրդական, այլ նոյնիսկ ժողովրդական շարժման հարցում կարող է ունենալ շատ համեստ հաւակնություններ, այդուհանդերձ փաստ է, որ Տէր-Պետրոսեանը կարողացել է ձեւաւորել մի կառույց, որն առնուազն ունի իշխանութեան համար գլխացաւանք առաջացնելու պոտենցիալ: Այդ գլխացաւանքը չի լինի ճակատագրական, բայց ինչ որ պահի կարող է առաջ բերել լարուածութիւն, որը իշխանութեանը բացարձակապէս անհրաժեշտ է, յատկապէս ընտրական փուլի վճռորոշ հատուածներում: Քաղաքացիական շարժումներն ու նախաձեռնություններն առանձին-առանձին բաւական փոքր են, նրանց արդիւնաւէտութիւնը խիստ յարթերակի է, նաեւ խիստ տեսական է նրանց ընդհանրական պլատֆորմի մտայնութիւնը, թէեւ ակնյայտորէն կան դրան ուղղուած փորձեր կամ մտորումներ: Բայց, այդ ամէնով հանդերձ, քաղաքացիական այդ

շարժումները իրավիճակի մէջ մտցրել են թերեւս անշուշտ փոփոխություն, եւ դրանով պայմանաւորուած ընկալումները ժամանակի մէջ աւելանալու են անխուսափելիորէն, ինչը նշանակում է հանրային ճնշման աւելացում եւ այդ ճնշման որակական փոփոխություն:

Ներիշխանական դաշտում, Սերժ Սարգսեանի հետ միասին իշխանութեան է եկել երիտասարդ գործիչների մի խումբ, կամ այդ խմբի մի շարք ներկայացուցիչներ ընդլայնել են իրենց ներիշխանական ներկայացուածությունը, եւ այժմ դրսեւորում են առաւել մեծ իշխանական հաւակնություններ՝ «հնաբնակներին» մի կողմ թողնելու եւ «նորաբնակներին» ազդեցությունը իշխանութեան մէջ գերակայ դարձնելու համար կամ այսպէս ասած «նորաբնակներին» իշխանութիւն հաստատելու համար: Այդ տեսանկիւնից, իշխանութեան ներսում տեղի ունեցող գործընթացները թերեւս նեղացում են միայն Ռոբերտ Քոչարեանի ազդեցութեան չեզոքացմամբ մեկնաբանուելով: Իհարկէ դա կայ, եւ ընտրութեան շեմին ունի ծանրակշիռ նշանակություն, բայց ինչդիրը թերեւս աւելի լայն է՝ «նորաբնակներին» եւ «հնաբնակներին» մրցակցություն: Իսկ այդ մրցակցությունը ենթադրում է նաեւ որակական որոշակի տարբերություններ, քանի որ առանց դրա, առանց որակապէս այլ, առաւել արդիական մտեցումներն առաջադրման, «նորաբնակներին» յաջողութիւնն անհնարին է:

Այդ առումով, նորաբնակներն ու հասարակութեան մէջ տեղի ունեցող որակական փոփոխությունները եթէ ոչ ռազմավարական առումով, ապա մարտավարական առումազն կարճաժամկետ առումով այսպէս ասած «բնական դաշնակիցներ» են եւ կարող են փոխադարձաբար օգտակար լինել միմիանց, կամայ, թէ ակամայ:

Լրջագոյն խնդիր է նաեւ Հայաստանում տնտեսական ռեսուրսների սահմանափակութեան խնդիրը, ինչը եւս բնականորէն սրում է Հայաստանի իշխանութեան ներքին մրցակցությունը, միեւնոյն ժամանակ սրութեամբ դնելով նաեւ հանրութեան սոցիալական ապահովութեան խնդիրները: Ո՞վքեր են ապահովելու սոցիալական խնդիրների սպասարկումը, ի՞նչ համամասնութեամբ, ի՞նչ են ստանալու այդ «անձնագոհութեան» դիմաց: Այդ

հարցերը եւս հապէս ընկած են իշխանութեան ներքին փոխարարութեան հիմքում:

Ինչ վերաբերում է արտաքին հարթուքում շերտերին, ապա այստեղ եւս իրավիճակը բաւական նեղացում կը լինի, եթէ տեղաւորուի միայն Ղարաբաղի խնդրի եւ հայ-թրքական գործընթացի համատեքստում: Ակնյայտ է, որ կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը համաշխարհային գործընթացներում շարունակում է մնալ բարձր, եւ դրսեւորում է նաեւ առաւել բարձրանալու միտումներ: Այդ համատեքստում, բաւական բարձր է նաեւ Հայաստանի ռազմավարական դերը քաղաքական եւ քաղաքակրթական իմաստով: Բանն այն է, որ կովկասեան տարածաշրջանում եւ մերձարածաշրջանային հատուածում այդպիսի պոտենցիալի կրողն ակնյայտորէն հանդիսանում է առաւելապէս Հայաստանը:

Նկատելի է նաեւ, որ այդ պոտենցիալի վրացական փորձարկումը, չնայած Սահակաշվիլիի ջանքերին, չի ստացում եւ չունի լուրջ քաղաքական եւ քաղաքակրթական հեռանկարներ: Հայաստանն այդ առումով կարծես թէ այլընտրանք չունի, ինչը թերեւս բարեբախտութիւն է մեզ համար: Բանն այն է, որ տարածաշրջանային այդ սեզմենտը անհրաժեշտ է արեւմտյան աշխարհաքաղաքական ծրագրերի համատեքստում, որպէս արդիականութեան, արժէքային եւ տեխնոլոգիական գեներացիայի «ֆորպոստ»: Այդ իմաստով, կրկին ի բարեբախտութիւն մեզ, Հայաստանը նշանակություն ունի աշխարհի համար աւելի լայն կոնտեքստում, քան գուտ հայ-թրքական եւ դարաբաղան կարգաւորումը:

Դա Հայաստանի վերնախավին դնում է բաւական յստակ պատասխանատուութեան առաջ: Եւ թէեւ հասկանալով ռուսական գործօնի ազդեցիկ դետրոնկտիւթիւնը, Արեւմուտքը Հայաստանում չի գնում իրավիճակի փոփոխություն, կամ համաշխարհային զարգացումների համատեքստում Հայաստանի իշխանութեան պատասխանատուութեան հարցի փաթեթային, յեղափոխական պարտադրման ճանապարհով, այդուհանդերձ փուլային ճնշումը Հայաստանի վերնախավի վրայ աւելանում է եւ թերեւս աւելանալու է, աւելի ու աւելի նուազեցնելով իշխանութեան լարախաղա-

ցային մաների հնարաւորութիւնը: Այդ տեսանկիւնից, յատկանշական էր օրերս Գերմանիայի դեսպանի՝ Հանս Յոհեն Շմիդտի յայտարարութիւնն այն մասին, որ Սերժ Սարգսեանը ներիշխանական վերադասաւորումներ է անում ընտրութեանն ընդառաջ, քանի որ եւրամիութեան ղեկավարներին խօսք է տուել անցկացնել լաւ ընտրութիւններ:

Այն, որ Հայաստանի իշխանութիւնը միշտ է այդպիսի խօսք տուել, իսկ յետոյ դրժել խօսքը, նորութիւն չէ: Նորութիւն է այն, որ արեւմտեան դիւանագէտներն առաջին անգամ են գնահատում Հայաստանի ներիշխանական վերադասաւորումները եւ բարձրաձայն յայտարարում դրանց եւ խոստման կապի մասին: Այլ կերպ ասած, Հայաստանի ներկայիս ընտրական փուլն Արեւմուտքի համար հերթական հանգրուանն է, երբ Հայաստանի իշխանութեան առաջ դրոււմ է պատասխանատուութեան ռեալ իրականացման հերթական խնդիրը, որոշակիորէն սահմանափակելով մաների աւանդական հնարաւորութիւնը:

Ընդ որում, այստեղ նոյնիսկ կարող է նշմարուել Ռուսաստանի դերակատարութեան աւանդական դրսեւորման որոշակի փոփոխություն: Բանն այն է, որ Փութինի սահուն վերադարձը ակնյայտորէն ապահովուեց նաեւ Արեւմուտքի հետ փոխգիշտման արդիւնքում: Արեւմուտքը պաշտօնական մակարդակով բաւական լոյս աւազանքեց Փութինի վերադարձին: Անգամ փորձագիտական արձագանքը, լինելով բաւական կոշտ, այդուհանդերձ այսպէս ասած հաւասարակշռուած էր: Ըստ ամենայնի, Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ այդ հարցում արձանագրուել են զլրբալ պայմանաւորուածութիւններ, փոխգիշտումներ, ինչի մասին թերեւս կը վկայի նաեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպութեան Ռուսաստանի անդամակցութեան հարցում վրացական վետոյի յաղթահարումը: Այնպէս որ, չի բացառոււմ, որ այդ փոխգիշտումների շղթայում եղել է նաեւ Հայաստանը, ոչ ինքնին որպէս Հայաստան, այլ որպէս կովկասեան շղթայի ռազմավարական կարեւորութիւն ներկայացնող օղակ: Այդ բազմազան ներքին ու արտաքին շերտերն են թերեւս պայմանաւորում Հայաստանի իշ-

Շար.ը էջ 17

Authorized Broker **SERVING SINCE 1975**

**blue** 

**BEDROS S. MARONIAN**

(818) 500-9585  
 CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





### ՊՐԱՒՕ ԱՐՏԱԻԱԶԴԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻՆ



#### ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Անտարակոյս, «պրաւօ» բառէ տարբեր բառի մը գործածութեամբ կարելի պիտի չըլլար ճշգրիտ գնահատանքը կատարել Հ.Բ.Լ.Մ.ի Արտաւազդ թատերախումբի Կիրակի 6 Նոյեմբեր 2011-ին բեմադրած «Սէր եւ Ծիծաղ» երկու արարով կատակերգութեան, որ մեր դասական երգիծաբաններէն Երուանդ Օտեանի «Չարչըլը Արթին Աղա», «Թաղականին Կինը», եւ «Միջնորդ Տէր Պապան» թատերախաղերէն յաջողապէս առնուած բաժիններու համադրումն էր:

Պրաւօ՝ պոռթկումը, թատերական ներկայացման պարագային, իր մէջ կը բովանդակէ հետեւեալ-

ները. թատերախաղի նիւթի նպատակայարմարումը, դերասանական կազմի ընտրութիւնը. դերասաններու վարսաչարդարումը, զգեստաւորումը եւ շարժումը, ինզքէս նաեւ՝ բեմահարթակի բաժանմունքներու, լուսաւորման, կահաւորման եւ երաժշտական ղեկարուեստական դասաւորումը: Անոնք՝ գիրար պէտք էր համալրէին աշխարհագրական, ժամանակագրական եւ դասակարգային ընկալեալ դրոյթներուն հաւատարիմ մնալով:

Բեմահարթակը իր բոլոր բաժանմունքներով՝ կահաւորում, լուսաւորում եւ երաժշտական դասաւորում՝ հարիւրամեակ մ'առաջ տիրապետած ձեւ ու գոյնի, երգ ու լարի ոճական կիրարկումով, արդէն իսկ ստեղծած էր գոհունակ տրա-



մադրութիւն մը մէջ մի հանդիսատեսի ներսիդին: Պրաւօ՝ թէքնիք անձնակազմի անդամներուն՝ Վիգէն Պալապանեանին-ասհիկ-, Բաֆֆի Գալամքարեանին-լոյս եւ երաժշտութիւն-, Նայիրի Էմիրզեանին -բեմի առարկաներ-, Մանուկ Սաթամեանին -բեմի կահաւորում-, Նարինէ Աւագեանին-գծագրութիւն-, Արփի Սամուէլեանին -երգերու յօրինում-, Անուշ Նաճարեանին -վարսաչարդարում, Նագարէթ Աջապահեանին -շարժում-, Ազնիւ Սերայտարեանին եւ Ազատուհի Գազանճեանին -զգեստաւորում-:

Պրաւօ՝ թատերախաղի նիւթի եւ դերասան-դերասանուհիներու այնքան զգուշաւոր եւ յարմարաւէտ ընտրութեան համար: Իր, աւելի քան դար մը կենցաղի հնութեամբ, բայց իր այժմէական հարազատութենէն ոչինչ զիջող կա-

տակերգութիւնը կուշտ ու կուռ ծիծաղի ներքեւ, ներկայ հանդիսատեսը առաջնորդեց հարիւրամեակ մ'առաջ ապրած արեւմտահայ ազգաբնակչութեան Պոլսահայ հատուածի մտերմութեան: Եւ այդ մտերմութեան հաստատումը սահուն ընթացք արձանագրեց շնորհիւ բեմահարթակի վրայ իրենց ներկայութիւնը գործնապէս արդարացնող եւ վարժ եւ՝ նորավարժ, իրենց թուական քանակով զարմանք պատճառող երկսեռ թերակատարները: Գրիգոր Սաթամեան՝ ամուսնական թեկնածու բժիշկ Շաւարշի, Նարինէ Աւագեանը՝ սպասուհի Մողոմէի, Ալեքս Խուրչիտեան՝ միջնորդ Մելգոն Էֆէնտիի, Արփի Պալապանեան՝ Եւփիմէի, Ռուբէն Հարմատայեան՝ ամուսնական թեկնածու Ագրիպասի, Արփի Սամ-


Շարք էջ 17

### ՍՏԱՅՈՒԱԾ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՅԱՆ ՎԱՅԱՆԵԱՆ-ՃԱՆՍԸԶԵԱՆ ՍՈՒԹՆՈՒԼՈՒՄԱՅԻՆ ՏԵՍԻԼՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԵԱՆ 2001

254 էջերէ բաղկացած, ինամուած տպագրութեամբ, պարզ, ամփոփ եւ դիպուկ՝ ոճային առանձնայատկութիւններով օժտուած հեղինակութիւն մըն է «Մութնուրուսային Տեսիլքներ Հայկական Լոս Անճելըսեան» նոր գործը, որ կը կազմէ Վահան Վահանեանին հինգերորդ գիրքը:

«Նոր Հայաստան» օրաթերթի հրատարակութիւնը եղող ներկայ գիրքը, լոյս ընծայուած՝ Տէր եւ Տիկ. Հէրի Տիրամարաններու մեկենասութեամբ, Տպարան Երեւանէն-Կլենտէյլ, 2001-ին՝ կը ցօլացնէ Լոս Անճելըս գաղութի անկումային կեանքը, ուր իր որոշակի, ժխտական պատասխանատուութեան բաժինը ունի, նաեւ ինք, գաղութը, հա՛յ գաղութը:

Վահան Վահանեան, Լոս Անճելըսի հայ գաղութի այս անկումային վիճակին պատասխանատուներու շարքին կը դասէ պարզ, անուս ամբարտաւանը, մեծամիտ ուսումնականը, անբարոյ ամուլը, աշխարհով մէկ հայազգի գաղթօճախներէ Լոս Անճելըս գաղթած տեսակաւոր հայերը: Այդ շարքին մէջ կը գտնուին նաեւ հայազգի կուսակցութիւնները, պարզ ու բարձրաստիճան հոգեւորականները, հայը՝ հայուն գայլ դարձած շահամոլները, սրբատառ կոնտակներու եւ հայրապետական շքանշաններու տիրանալու մարմաջնեքը, շփացած կիները, ցուցադրական երեւոյթները: Նաեւ՝ գաղութէն ներս տիրական դարձած այլամերժութիւնը, նախանձը, աւան-



դական կարգ անցած արտակարգ շուայութիւններով տօնախմբուող կնունք-նշանտուք-շաուր-հարսանիքները, մահացածներու տրուած տեսակցութիւններն ու հոգեճաշերը եւ այլատեսակ բիւրաւոր պատճառները: Ծարքը տակաւ կ'երկարի ու կ'երկարի, եթէ շարունակելու ըլլանք հեղինակին շարադրանքները: Յանդուքն նկրտում-խայթոցնշտրակումներով՝ Լոս Անճելըսի հայազգի գաղութը հոգեմտաւոր մերկութեան մէջ հարազատօրէն լուսանկարող հեղինակութիւն մը արդարեւ, ուր Վահան Վահանեան կը պատգամէ «Խնդալ՝ երկար ու առողջ ապրելու համար»:

S.Ա.Գ.

Հ.Բ.Լ.Մ. ԱՐՏԱԻԱԶԴԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ

# ՍԵՐ ԵՒ ԾԻԾԱԴ

Կատակերգութիւն 2 արարով

Հեղինակ՝ ԵՐՈՒՄԵՆԻ ՕՏԵԱՆ  
Թիւրքիչ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Շաբաթ, Նոյեմբեր 5, 19, 26  
ժամը 8:00-ին

Կիրակի, Նոյեմբեր 6, 13, 20, 27  
ժամը 5:00-ին

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 10  
ժամը 8:00-ին

Կիրակի, Դեկտեմբեր 4, 11  
ժամը 5:00-ին

Մուտքի Լուր՝ \$20

---

ԴԵՐԱՎԱՏԱՐՆԵՐ՝

ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ, ԱԼԵՔՍ ԽՈՒՐՉԻՏԵԱՆ, ՈՌԻՔՆ ԴԱՐՄԱՆՍԱՅԵԱՆ, ԱՐԻ ԼՈՊԱՐԻՏԵԱՆ, ԱՐՓԻ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ՆԱՐԻՆԷ ՄԻՍԳԵԱՆ, ԱՐՓԻ ԴԱԼԱՊՄԵԱՆ, ԱՐԱՄ ՍՈՒՐԱԳՅԱՆ, ՎԱԳՕ ՆԱԶԱՐ, ԳՐԻԳՈՐ ՍՄՈՒՆԵԱՆ, ԹԱԻՆ ԳԱԼԱՄՔԱՐԵԱՆ, ԱԼԻՆ ԽԱՆՃԵԱՆ, ՈՍԲԵՆ ԲՈՐՍԵՂԵԱՆ, ՆԱՅԻՐԻ ԷՄԻՐՉԵԱՆ, ԱԼԻՆ ԴԱՐՈՒՆԵԱՆ, ԱՍՏԳԻԿ ՄԻՆԱՆԵԱՆ

Հ.Բ.Լ.Մ. ՓԱՍՏԻԼԱՅԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԻՋ  
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել Հ.Բ.Լ. Միտքեան Գրասենեակը  
(626) 794-7942 կամ (626) 710-3805  
[itsmyseat.com](http://itsmyseat.com)  
[www.agbuca.org](http://www.agbuca.org)



### ՀԱՃՆՈՅ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԳՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Փաստորինայի եւ շրջակայքի հայութեան համար տօնական բացառիկ օր մըն էր Կիրակի Հոկտեմբեր 16, 2011ը: Արդարեւ, այդ օր տեղւոյս Հաճնոյ Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ արուարտի Հաճնի հերոսամարտի 91րդ տարեդարձի աւանդական նշումը:

Փաստորինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եկած էին խուռներամ հաւատացեալներ, մեծ մասամբ Հաճնոյ հին սերունդի ներկայացուցիչներ: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն ի չիշատակ Հաճնոյ Հերոսամարտի նահատակներուն: Արարողութեան նախագահեց Հոգւ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Պատարագէն ետք ժողովուրդի հրաւիրուեցաւ եկեղեցոյ կից վերանորոգուած Կիրակոս սրահը: Արժ. Տ. Սարգիս Քհնյ. փէթոյեան յատուկ աղօթքով օրհնեց Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած ճիտապօր մատաղը, որ յետոյ բաժնուեցաւ աւելի քան 400 ներկաներուն: Իսկ մէկ մասն ալ յատուկ տուփերով ծախուեցաւ տանելու համար:

Գործադրուեցաւ օրուան պատ-

շաճ յայտագիր մը, գոր ձեռնհասօրէն վարեց Յակոբ Կակոսեան: Ան ներկաները հրաւիրեց յոտնկայս երգելու հաճնցիներու քայլերգը «Օղանաւ եկաւ»:

Այնուհետեւ Յ. Կակոսեան իր բացման խօսքին մէջ ըսաւ «մենք յաղթանակ մը տարինք փառաւոր: Շարունակեմք մեր նահատակներու աւանդը մինչեւ վերջնական յաղթանակ մեր իրաւունքներու վերստացումը: Իրաւունքներ՝ որոնք Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած է հազարամեակներէ ի վեր:

Այսօրուայ հաւաքոյթին բուն նպատակը վերանորոգում է մեր ուխտին: Ուխտ մը որ չի հիննար: Ուխտ մը որ կը նշանակէ սէր, նուիրում եւ ծառայութիւն: Ուխտ մը որ յաւիտենական է: Այս է որ կը պահանջէ Հայաստանն ու հայ ժողովուրդը իր գաւակներէն»:

Յաջորդաբար ելոյթներ ունեցան Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան ատենապետ Եփրեմ Պաղպուտարեան եւ իրաւաբանուհի Լարա Գայեայեան: Իրենց ելոյթները տեսնել առանձին:

Ելոյթ ունեցաւ նաեւ լիբանա-

Շաբ.բ էջ 18

### ՓԱՍՏԱԲԱՆՈՒՅԻ ԼԱՐԱ ԳԱՅԱՅԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Իննըսուն ու մէկ տարիներ առաջ Հաճնցիները մղեցին իրենց Հերոսամարտը, վասն հայութեան, վասն հայրենի հողին, վասն հայ լեզուին, մշակոյթին եւ աւանդութեանց, եւ վասն քրիստոնէական հաւատքին: Իննը ամիսներու անհաւասար գոյամարտի ընթացքին, ազատութեամբ հպարտ Հաճնցիները ինկան պատնէշի վրայ՝ ազատ ու անկախ Հայրենիքի տեսլականով: Անոնք մեզի աւանդ թողեցին անսակարկ հայրենասիրութեան եւ պայքարի անմահ ոգին:

Այսօր, մեր բոլորիս ներկայութիւնը այս սրահէն ներս, ոգեկոչելու համար անոնց ինկելի չիշատակը, կ'ապացուցանէ թէ անարգ թուրքը ձախողած է իր ծրագիրին մէջ, իսկ մեր հայրենակիցները չեն նահատակուած զուր տեղ:


Հայ Ազատագրական Պայքարի ամենափայլուն մէկ էջը հանդիսացող Հաճնոյ Հերոսամարտը ինքնին սկիզբն էր մեր գոյակութիւն: Այսօր, միասնական կեցուածքով աւելի բուռն եւ աւելի աշխուժօրէն պէտք է շարունակենք մեր պահանջատիրական պայքարը:

Ուրեմն, մեր պայքարը պէտք է ըլլայ բազմակողմանի:

Առաջին.- Պատրաստենք բարձր մակարդակի ուսեալ երիտասարդներ, որպէսզի կարենան մրցիլ իրենց ոչ հայ ընկերներուն հետ՝ տեղական, նահանգային եւ դաշնակցային մակարդակով:

Երկրորդ.- Ըլլանք աշխուրջ, ջամբելու համար մեր երիտասարդներուն՝ ազգային գիտակցութիւն եւ հպարտանք, հայոց պատմութիւն, լեզու, մշակոյթ եւ աւանդութիւններ: Անոնք պէտք է լրջօրէն հասկնան անցեալն ու իրենց նախնիներուն նահատակութեանց դրդապատճառները, որպէսզի կարենան հասկնալ ներկայի իրենց ընթացքին ուղղութիւնը:

Երրորդ.- Ներշնչենք մեր երիտասարդներուն՝ գերազանցելու եռանդը, ինչպէս նաեւ կեանքի մէջ



Իրաւաբանուհի Լարա Գայեայեան

տարբերութիւն մը ընելու գերագոյն նպատակը: Այս բոլորը կը պարտաւորեցնէ մեզ դաստիարակել մեր գաւակները ազգային կրթութեամբ, սկսելով մեր իսկ տուներէն:

Հայ Քոյրերու Վարժարանը, այս տարի եւս մեծ շուքով տօնեց Մշակոյթի ամիսը՝ աշակերտներն ու ծնողները ներգրաւելով ծրագրին մէջ եւ գալն վերածելով միօրեայ հայկական փառատօնի: Անգամ մը եւս շեշտելով հայ վարժարանի առաքելութիւնը, որպէս հայակերտման ամբողջ, յատկապէս հայ ուսուցիչին դերը՝ կոփելու հայ մարդը, կերտելու անոր հոգեմտաւոր աշխարհը՝ հայ երգով, պարով, գրականութեամբ եւ հայկական սովորութիւններով:

Շաբաթ, Հոկտեմբեր 22ին կազմակերպութեամբ վարժարանիս հայկական բաժանմունքի եւ գործակցաբար ծնողաօժանդակ մարմնի անդամներուն տեղի ունեցաւ վարժարանիս Մշակոյթի օրուան հանդիսութիւնը առաւօտեան ժամը 10:00էն սկսեալ եւ տեւեց ամբողջ օր մը: Ժամանակէն շատ առաջ արդէն ծնողներ եւ հիւրեր հաւաքուած էին եւ մեծ խանդավառութեամբ կը սպասէին յայտագրին: Սրահը զարդարուած էր աշակերտներու աշխատանքներով, պատերը վերածուած էին մեր ոսկեղնիկ տառերուն, որոնք գունաւորուած էին աշակերտներու հարուստ երեւակայութեամբ, ապա հայոց վանքերն ու եկեղեցիները, իսկ հայկական տարազները իրենց պսպղուն գոյներով կենդանացուցած էին սրահը:

Իսկական Մշակոյթի փառատօն, վարժարանի բակը նոյնպէս մշակոյթի խօսուն բեմ դարձած էր, ամէն կողմ ցուցադրուած էին հայկականութիւնը բուրոյ Սեղանիկներ, հայ գիրքն ու գրականութիւնը իր պատուաւոր տեղը գրաւած էր յանձինս «Պերճ Գրատուն»ին, ուրիշ կողմ մը հայկական զարդեր եւ սրտի խօսող հետաքրքրական հայկական արտագրութիւններ, իսկ ախորժաբեր հոտերով իր կողմ հրաւիրող բաժինը՝ հայ կնոջ ճաշակն ու խոհանոցային ձիւղերը ցուցադրող հայկական ճաշերն ու... համով հայկական պանիրը ու դպրոցի շրջափակին մէջ եփուող լաւաշը եւ յատուիկ պատրաստուած Ղաբամաներն էին...

Այո՛, իսկական հայկական փառատօն, վարժարանէն ներս խանդավառութիւն կը տիրէր, ամէն կողմ լեցուն էր ծնողներով, աշակերտներով, ուսուցիչներով, եկած էին նաեւ շրջանաւարտ աշակերտներ, որոնք մեծ կարօտով վերադարձեր էին եւ արդէն հին օրերու


մտերմութեամբ կը վարուէին: Խանդավառութիւնը մեծ էր նաեւ Մանկապարտէզի շրջափակէն ներս ու տեղադրուած էին զանազան տեսակի խաղալիքներ՝ դպրոցի բակը վերածելով գեղեցիկ խաղավայրի մը ուր փոքրիկներ իրենց աշխարհին մէջ անհոգ, ուրախ կը թռչկոտէին մէկ խաղալիքէ ուրիշ մը մինչեւ որ մանկական երգերու մեկնաբան թալին իր հրապուրիչ ձայնով բոլոր մանուկները համախմբեց իր շուրջ խանդավառութիւնը հասցնելով իր լրումին:

Այս խանդավառ մթնոլորտին մէջ, հեզասահ ընթացաւ նաեւ օրուան պաշտօնական բաժինը իր բազմազան յայտագրով, ուր բեմ բարձրացան դպրոցի աշակերտները, եւ յաջորդաբար ներկայացուցին իրենց բաժինները, երկար յայտագիրը հերթափոխութեամբ կատարուեցաւ, ծնողներ հաճոյքով կը դիտէին իրենց զաւակներուն ներկայացումները, ապա կը շարունակէին իրենց ուրախութիւնը՝ մասնակցելով սրահէն դուրս տեղի ունեցող խաղերուն եւ այլ յայտագրերուն, իրենց տեղը տալով նոր եկողներուն, եւ այսպիսով բոլորը վայելեցին իրենց հրամցուածները հաւասարապէս:


Հանդիսութեան տեւողութեան յայտագրի բոլոր մասերուն՝ թատրոն, երաժշտութիւն թէ ամուռնք իր հմտութեամբ դաշնամուրով կ'ընկերակցէր վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պաղտասարեան, իսկ օրուան հանդիսավարն էր վարժարանիս հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկ. Լինտա Գանտիլեան, որ առիթը նմանցուց բերքահաւաքի եւ ծնողներու նուիրաբերումը այն մշակներուն, որոնք իրենց լաւագոյնը կը մատուցէին իրենց աստուածներուն, ապա Տիկ. Լինտա երկու ժամ անընդհատ ներկայացուց աշակերտները ու խօսեցաւ անոնց ներկայացուցած հայ մշակոյթի բնագաւառներուն մասին, արդարեւ հանդիսութիւնը ունէր քանի մը մասեր՝

Առաջին բաժնով ներկայացան միջնակարգի աշակերտները, երգելով եւ արտասանելով հայրենաշունչ երգեր ու ոտանաւորներ, ապա 7րդ կարգի աշակերտներ բեմականացուցին թատրոն մը, որու ընդմէջէն ներկայացուեցաւ ներկայ հայ սերունդը դպրոցի թէ տան մէջ իրենց աւօրեայ կենցաղով եւ հայերէն լեզուի եւ սովորութեանց հանդէպ իրենց ցուցաբերած կեց-

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծախառնակներու եւ մանուկներու Քայրոփոքաբոյք բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, բոկային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատասխան  
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



# ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ

## ԶՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆ

Որքան ավելի ենք մտնում հայոց գրերի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի անունը կրող գիտարշաւի վերջնագծին, այնքան ավելի շատ, ավելի չափառ և ավելի ուժգին ենք գիտակցում մեր աշխարհաշուրջի բուն էությունը:

Խօսքն իհարկէ, չի վերաբերում մարզական բաղկացուցչին: Ո՛չ, իհարկէ ոչ մի հակասություն կամ հակադրություն չկայ մարզական ծովագնացութեան իրողութեան եւ գիտարշաւային խնդիրների միջև, որոնք ներառում են Սփիւռքի պատմությունը եւ նույնիսկ աշխարհագրությունը: «Էքսպեդիցիա» լատիներէն տերմինը հայերէն բառացիորէն հնչում է որպէս «գիտական արշաւ»: Որոշակի երթուղով իրագործող այդ արշաւն ունի ոչ միայն գոյս գիտական, այլեւ ցանկացած «յատուկ» նպատակ, ներառեալ նիւթերի հաւաքումը: Մենք մարզանաւով նաւարկութիւն ենք կատարում Սփիւռքի բարդագոյն եւ ողբերգական երթուղիներով, որոնք երկար ու երկար դարերի ընթացքում գծագրուել են երկրագնդի կենդանի քարտէզին: Մենք կանգնած ենք կատարուած փաստի առջև: Աշխարհի հարիւր երկրներում հայկական համայնքներ են կազմաւորուած: Մեր գիտարշաւային արխիւում նշուած են ավելի քան հազար եօթ հարիւր եկեղեցիներ: Եւ իհարկէ, դրանց թոււմ է սուրբ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին՝ Սինգապուրում:

Հայերն առաջին անգամ Սինգապուրում յայտնուել են 18-րդ դարում, անցնելով Իրանի, Հնդկաստանի, Մալայզիայի վրայով: Այսօր քաղաքում կայ «Արմենիա» անունը կրող մի գեղեցիկ փողոց: Դեռեւս Զատիկի կղզում գտնուելիս մենք իմացանք, որ Սինգապուր պետութիւնը սօնում է Հարաւային եւ Հարաւ-Արեւելեան Ասիայի հնագոյն եւ գործող քրիստոնէական եկեղեցու հիմնադրման 175-ամեակը: Քաղաքի գլխաւոր տեսարժան վայրերից է 19-րդ դարում եւրոպական ոճով կառուցուած հայկական հիւրանոցը: Իսկ Սինգապուրի կենտրոնում արձան է կանգնեցուած ի պատիւ քաղաքի խորհրդանիշը հանդիսացող եգիպտոսէական ծաղիկի, որն անցրել է հայուհի Ագնէս Յովակիմեանը:

\* \* \*

Յեյլոնի հետ հանդիպմանն առանձնապատուկ էի նախապատրաստուել:

Երկար փորձերում էի նաւալին, այլինքն՝ գիտարշաւային գրադարանը, սեփական արխիւներս եւ անյամար գրառումներս: Յուշատետրերից մէկում նշուած էր՝ 1972 թուականին Յեյլոն կղզին դարձաւ Շրի Լանկա: Չգիտեմ ինչու, բայց ինձ շատ էր դուր գալիս հին անուանումը: Գուցէ ցեյլոնյան թէյի պատճառով, գուցէ՝ Չեխովի:

Իմ առաջին գրական կուռքը եղել է Աւետիք Իսահակեանը: Սփիւռքի ճամբաներով շրջելով, ես ամենուր հայրենակիցներին հետ հանդիպումների աւարտին կարողում եմ վարպետի (այդպէս էր կոչում ժողովուրդը հայ մեծ բանաստեղծին) հանձարեղ քառատողը:

Ռուս ականաւոր պոէտ Միխայիլ Դուդինը թարգմանել է հայկական փիլիսոփայութեամբ ներծծուած այդ քառեակը:

Մի փոքրիկ շեղում, ավելի ճիշտ՝ բացատրութիւն, մեկնաբանութիւն. միայն ու միայն հայերի շրջանում, մօտ հինգ հազար տարի, որ ու գիշեր, ցանկացած պահին, ցանկացած ընտանիքում կարելի է լսել մի լեզունդար արտայայտութիւն՝ «Յաւը տանեմ»: Դա հնչում է մօտաւորապէս այսպէս. «Թող ես ինձ վերցնեմ քո ցաւը»: Աւելին՝ ոչ թէ պարզապէս վերցնեմ, այլեւ «տանեմ քո այդ ցաւն ինձ հետ, իմ մէջ»: Բոլորը գիտեն, թէ ինչ է ցաւը: Ճիշտ է, ոչ ոք չի կարող մի կարգին բացատրել դրա էությունը:

Ժամանակի հետ իմ միւս կուռքերը դարձան Անտոն Պաւլովիչ Չեխովը եւ Ջեյ Լոնդոնը: Բացի նրանց ստեղծագործութեան նկատմամբ սիրահարուածութիւնից, ինձ համար կարեւոր էր եւ այն, որ Անտոն Պաւլովիչը բժիշկ էր, իսկ Ջոն Գրիֆֆիտը (Ջեյ Լոնդոնի իսկական անունն է) ե՛ւ ծովն է, ե՛ւ նաւերը, ե՛ւ տունդրան, ե՛ւ շնասահակները:

Իհարկէ, իմ երկար կեանքի ընթացքում շատ են եղել սիրուած եւ ընթերցող հայ, ռուս եւ օտարագրի այլ գրողներ ու փիլիսոփաներ, բայց ահա իսահակյանը,

Չեխովը եւ Լոնդոնը յաւերժ մնացին ինձ հետ: Այնպէս որ, պատահական չէր, որ «Արմենիայի» անձնակազմը Շրի Լանկայում մի ամբողջ օր նուիրեց Չեխովին: Լաւ յայտնի է, որ մեծ գրողն իր համար ծանր ու վտանգաւոր ճամբորդութիւն է կատարել դէպի Սախայի կղզի: Յաղթահարել է հազարաւոր ու հազարաւոր քրիտմեթեր ե՛ւ ձիերով, ե՛ւ ոտքով, խոնաւ հագուստներով, թաց վալենկաներով: Եւ այդ ամէնն այն դէպքում, երբ հիւանդ էր թոքախտով:

Ես լիովին վստահ եմ (թէեւ չեխովագէտներից ոչ մէկի մօտ չեմ կարդացել այդ մասին), որ Անտոն Պաւլովիչի ներսում նստած էր աստուածատուր ճանապարհորդը: Ես շատ անգամներ եմ եղել Սախայիում եւ լաւ գիտեմ ոչ միայն, թէ ինչպիսի անանցանելի ուղիներով է նա շրջել երկար ամիսներ, այլեւ թէ ինչպէս է մի ողջ կղզու բնակիչների մասին (հիմնականում՝ նախկին աքսորեալների) հաւաքել մի քանի հազար քարտեր:

Սախայիից Չեխովը տուն վերադարձաւ արդէն «Պետրբուրգ» շոգենաւով: Պէտք է ասեմ, որ այդ ճանապարհն ավելի ծանր էր, քան ռուսական անծայրածիր տարածքներով անցնելը: Մենք Սինգապուրից մինչեւ Միջերկրական ծովն ընկած ճամբան անցել ենք Չեխովի երթագծով: Բայց Անտոն Պաւլովիչի վրայ առաւել մեծ տպաւորութիւն է գործել իր ներկայութեանը Յեյլոնում: Ես, կարելի է ասել, ողջ կեանքում զբաղուել եմ Չեխովի իւրօրինակ հետազոտութեամբ: Մի քաջարի մարդու, որը երկու աստուած ունէր՝ պարտք եւ խիղճ: Ինձ միշտ թուացել է, թէ Չխովի լայնօրէն յայտնի պատկերը, լինի լուսանկար, թէ իլիաՌեպինի հանձարեղ գործը, այն չէ, ավելի ճիշտ՝ ամբողջը չէ: Ողջ Չեխովը չէ: Յայտնի հրատարակիչ Սուվորինին ուղղուած իր նամակում նա գրում է. «Յեյլոնը այն վայրն է, որտեղ դրախտն է եղել: Այստեղ, դրախտում ավելի քան հարիւր վերստ եմ անցել երկաթուղով եւ մինչեւ կոկորդս կշտացել արմաւենու անտառներից եւ բրոնզագոյն կանանցից»: Բայց ես չգի-



տէի, որ կայ այդ նամակի շարունակութիւնը: Իսկ իմացալ այդ մասին Յեյլոնում, այցելելով «Գրանդ Օրիենտալ» հիւրանոցի յուշասենեակ, որը կրում է Չեխովի անունը:

Ատում են այդ համարը հիւրերին է տրուում մեծ գումարով: Այնտեղ «Արմենիայի» անձնակազմը հանդիպեց Պատրիս Լումուժայի անունան ռուսաստանեան համալսարանի շրջանաւարտ Ռոնջան Սենասինգհի հետ, որը մեծ գրողի շատ ստեղծագործութիւններ է թարգմանել սինգալերէն եւ գրել է «Չեխովը Յեյլոնում» մենագրութիւնը: Զարմանալի քնքշալից այդ քերով եւ Չեխովին սիրահարուած այդ մարդը, որի մաշկը սեւ չէ, այլ՝ հենց բրոնզագոյն, կարդաց Չեխովի Սուվորինին ուղղուած նամակի շարունակութիւնը՝ բարձրաձայն արդէն սինգալերէնից ռուսերէն թարգմանելով: «Կշտացել եմ արմաւենու անտառներից եւ բրոնզէ կանանցից» բառերին յաջորդում է. «Եւ երբ ես երեխաներ ունենամ, ապա ոչ առանց հպարտութեան կ'ասեմ նրանց՝ շան գաւակներ, ես ժամանակին հնդկուհու եմ սիրելի: Եւ որտե՞ղ: Կոկոսի անտառում, լուսնեակ գիշերով»:

Այո, սա նոյնպէս Չեխովն է: Հենց Սախայիից յետոյ, 1890-ից մինչեւ 1904 թուականը նա ստեղ-

ծեց իր ամենահանձարեղ գործերը: Իսկ մահացաւ այնպէս, ինչպէս ապրել էր՝ չեխովավարի:

Օլգա Լեոնարդովնա Կնիպպեր-Չեխովայից մի գաւաթ շամպայն խնդրեց: Ասես տօնի, ասես նոր նաւ ջրարկելու առիթով: Ըմպեց, ժպտաց, շրջուեց ձախ կողին եւ շուտով լուեց յաւիտեան: Դա էլ նա էր: Չեխովը:

\* \* \*

Շրի Լանկան մեր հոգում տեղ գտաւ ոչ միայն այն պատճառով, որ դեռ հարիւր մէկ տարի առաջ Չեխովն այդ կղզու մասին գրել էր, թէ «Ես եղել եմ դժոխքում, ինչպիսին ներկայացել է ինձ Սախայիում, եւ դրախտում, այսինքն՝ Յեյլոն կղզում»: Այստեղ, նաւահանգստում, որտեղ դեռեւս գործող պարետային ժամի պատճառով գիւնտորականներն ավելի շատ են, քան քաղաքացիականները, փաստաթղթերի աւանդաբար բազմաբարձեւակերպման ժամանակ անսպասելի բան կատարուեց: Լսելով, որ Հնդկաստանից մենք Արաբական եւ Կարմիր ծովերով հասնելու ենք Եգիպտոսի ափեր, իսկ այնտեղից Սուէզի ջրանցքով՝ Միջերկրական ծով, մաքսայինները, սահմանապահները, գիւնտորականները

Շաք.ը էջ 17

**A.G.B.U. -A.Y.A.**  
Glendale-Pasadena  
Chapter  
**THE MARCHING BAND**

Have Fun Join Now Learn to Play

Classes are Every Saturday @ 11:am  
for an application or to reserve your spot  
call 626-794-7942 or send an email to  
agbupasadena@gmail.com

Professional Instructors  
Beginners are welcome





# Telethon 2011

November 24

**Thanksgiving** Day  
8am – 8pm PST

Watch the 12 hour live webcast from anywhere in the world at [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)



ARMENIA FUND TELETHON 2011



A GIFT OF | A GIFT OF  
**WATER | LIFE**

Text **Armenia** to

**50555**

donate **\$10** TODAY!

\$10.00 donation to Armenia Fund. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Message and Data Rates May Apply. Text STOP to 50555 to STOP. Text HELP to 50555 for HELP. Full Terms: [www.mGive.org/T](http://www.mGive.org/T)



**CHECK YOUR LOCAL TV LISTINGS**

City-State-Region	Station	Digital Ch.	Cable Channel	Satellite	Time
<b>Central California</b> Fresno & Central California	<b>KGMC</b> Channel 43	43.1	<b>COMCAST</b> Channel 10 <b>AT&amp;T U-VERSE</b> Channel 43	<b>DISH</b> 43	8am-8pm PST
<b>Northern California</b> San Francisco & Bay Area	<b>KTSF</b> Channel 26	26.1	<b>COMCAST</b> Channel 8 <b>AT&amp;T U-VERSE C</b> Channel 8	<b>DIRECTV</b> 26 or 893 <b>DISH</b> 26 or 8237	8am-7pm PST
<b>Southern California</b> Greater Los Angeles Area	<b>KSCI</b> Channel 18	18.1	<b>ALL CABLE SYSTEMS</b> Channel 18 <b>AT&amp;T U-VERSE</b> Channel 18 <b>VERIZON FIOS</b> Channel 18	<b>DIRECTV</b> 18 <b>DISH</b> 18	8am-8pm PST

For East Coast broadcast coverage, please visit [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)



# ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐԸ, ԱՆՈՆՑ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ, ՄՇԱԿՄԱՆ ԳԻՇԴ ՁԵԻՆԸ

## ԳՈՂԱՐ ՎԱՐԴԱՆՆԱՆ

Մարմինը առողջ եւ կենսունակ պահելու համար կարեւոր է կենսասնութեանը հարուստ սնունդի ընդունումը, որոնք կը գտնուին առաւելապէս թարմ բանջարեղէններու ու պտուղներու մէջ: Յայտնի են աւելի քան 100 տեսակի բանջարեղէններ: Յաճախ օգտագործողներէն են՝

**ԳԵՏՆԱԽՆՁՈՐԸ՝** գոր կ'անուանեն երկրորդ հաց, ունի անդալին բարձր արժէք դիւրամարս է: Անոր 100 կրամը կը պարունակէ 20 կրամ Vit. C, որ կ'իստվ կը նուազի կէս տարի պահելէ կամ խոհարարական մշակումէ ետք: Կը պարունակէ 76% ջուր, 17.5% օսլայ (նիշա) եւ 0.5% շաքար: Կը պարունակէ հեշտ իւրացող շաքարանիւթ որ եփելէ ետք կը վերածուի օսլայի: Իր պարունակած մեծ քանակի փոթասիւտմի աղերու պատճառով օգտակար է երիկամներու եւ սրտային հիւանդութիւններ ունեցողներուն:

Գիրնալու հակում ունեցողներուն խորհուրդ չի տրուիր չարաշահել գայն, քանի որ ան ունի համեմատաբար բարձր ջերմութ: Գետնախնձորը պէտք է կեղուել բարակ շերտով, քանի որ անմիջապէս կեղեւին տակ կը գտնուին բոլոր աղերն ու փրօթիչները: Պէտք է խաշել կեղեւով, այդպիսով կը պահպանէ 75 տոկոսը կենսասնութեան, իսկ մաքրուած եւ կտրտուած եփածը՝ միայն 35-50 տոկոսը:

-Եփած գետնախնձորը դիւրին կը մաքրուի, եթէ եփելէ անմիջապէս ետք վրան պաղ ջուր լեցուի:

-Գետնախնձորը եփել մեղմ կրակով, եթէ կրակը ուժեղ ըլլայ, ան կ'եփի դուրսէն, իսկ ներսը հում կը մնայ:

-Տապկուած գետնախնձորը համեղ կ'ըլլայ, եթէ տաք ձէթի մէջ լեցնելէ առաջ լաւ մը չորցուի անձեռոցիկով:

-Մաքրուած գետնախնձորը ջուրի մէջ մէկ ժամ մնալով կը կորսնցնէ 13 տոկոս կենսասնութ (Vit. C):

ԼՈՒԻԿը կը պարունակէ պէթաքարոթին, օլիկո-էլեմանթներ՝ փոթասիւտմ, ֆոսֆոր, երկաթ, հանքային աղեր՝ Vit. A., C., E., ունի ցած ջերմութ, յանձնարարելի է անդականոնի հետեւողներուն: Ան չի յանձնարարուի յօղացաւով տառապողներուն, իր պարունակած թթուներուն պատճառով: Լոլիկը աւելի թարմ ու երկար կը պահ-

պանուի, եթէ շարուի մէկ շարքով, պտղակոթերը դէպի վեր: Լոլիկի մածուկը նախընտրելի է պարպել մետաղէ ամանէն եւ պահել վրան աւելցնելով աղ եւ քիչ մը ձէթ:

**ՎԱՐՈՒՆԳը** կը պարունակէ 95 տոկոս ջուր: Ան ամենէն քիչ օգտակարութիւն ունեցող բանջարեղէնն է: Կը յատկանշուի ոչ իր սննդային արժէքով, այլ համով ու բուրմունքով, որու շնորհիւ կ'աշխուժանէ մարտդական գեղձերու աշխատանքը, օգտակար է քրոնիկ պնդութիւն ունեցողներուն: Ան կ'օգտագործուի որպէս դէմքի մորթը մաքրող, թարմացնող եւ ճերմկցնող միջոց:

**ԿԱՂԱՄԲը** ունի շատ ցած ջերմութ, կը պարունակէ նարինջի եւ կիտրոնի հաւասար օ կենսասնութ, իսկ ծաղկակաղամբը 1.5-2 անգամ աւելի: Հարուստ է քալսիումով եւ ֆոսֆորով, որոնք շատ կարեւոր են ոսկորներու համար: Վրան թթու աւելցնելէ ետք ան կը պահպանէ իր կենսասնութեան մեծ մասը: Մտածոքային հիւանդութիւններ ունեցողներուն խորհուրդ կը տրուի օգտագործել գայն եփած վիճակով եւ քիչ քանակով: Կաղամբը կը պարունակէ քիչ ածխաջրատ, գոր կրնան օգտագործել շաքարախտէ տառապող հիւանդները: Հում կաղամբը կը պարունակէ տարտրոնաթթու, որ կը քայքայէ օրկանիզմի մէջ եկած ճարպը, այս պատճառով գէրերուն խորհուրդ կը տրուի գործածել հում կաղամբով պատրաստուած աղցաններ: Մանուշակագոյն կաղամբը իր սննդային արժէքով աւելի նախընտրելի է աղցաններու մէջ:

**ԾԱՂԱԿԱՂԱՄԲը** կը պահպանէ իր ճերմակ գոյնը, եթէ եփելէ առաջ 10 վայրկեան պահուի պաղ ջուրի մէջ, որուն վրայ աւելցուած ըլլայ նաեւ քիչ մը քացախ կամ կիտրոնի հիւթ: Շատ օգտակար է նաեւ ծաղկակաղամբի միւս տեսակը՝ պրոքոլիս:

**ՃԱԿՆԴԵՂը** իր պարունակած բջջանիւթի, շաքարի, օրկանական թթուներու եւ աղերու շնորհիւ օժտուած է ստամոքսը թուլցնող յատկութեամբ: Պնդութիւն ունեցողներուն կը յանձնարարուի առաւօտեան անօթի ստամոքսով ուտել 50-100 կրամ եփած ճակնդեղ: Օգտակար է արեան տկարութիւն ունեցողներուն: Ան պէտք է եփել կեղեւով, առանց արմատը կտրելու, եռացող ջուրով, փակ կաթսայի մէջ:

**ՍՏԵՊԻՆը** կը պարունակէ գրեթէ բոլոր կենսասնութերը, հարուստ է պէթաքարոթինով, որ կը

վերածուի կենսասնութի, կը նպաստէ մարմնի աճին եւ տեսողութեան լաւացման: Անոր կեղեւը շատ բարակ է, այդ պատճառով շուտ կը թառամի:

**ՍՈՆԻ** եւ **ՍԽՏՈՐԻ** բուժիչ յատկութիւնները յայտնի են հին ժամանակներէն: Թարմ սոխի կանաչ մասը իսկական vitamin c.ի հանք մըն է: Ան հիւանայի կ'օգնէ հագի, խուխի, լինտերու հիւանդութիւններու: Սոխի, սխտորի եւ ծովափողկի պարունակած Ֆիթոնցիտները կ'ոչնչացնեն հիւանդացարոյց մանրէները: Անոնք կ'օգտագործուին որպէս ինքնուրոյն, ոչ խոնաւ տեղ, իսկ եթէ արդէն սառած է, ձգել նոյն տեղը եւ օգտագործել, քանի որ անոր որակը չի փոխուիր սառելէ ետք: Սխտորի հետեւողական օգտագործումը կը նպաստէ արեան գերճնշումի կանոնաւորումին, ինչպէս նաեւ կ'իջեցնէ գէշ քոլեսթերոլի քանակը:

**ՍՄԲՈՒԿը** հարուստ է ածխաջրատներով, բջջանիւթով, փոթասիւտմով, որոնց շնորհիւ կ'իջեցնէ քոլեսթերոլի քանակը արեան մէջ: Սմբուկը երկար ժամանակ իր մէջ կը պահպանէ կենսասնութերը:

**ՏԵՐԵԻԱԻՐ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԵՐԸ՝** ազատքեղ, շոմին, բանձար, ուքթա, քրաֆա եւ այլն կը պարունակեն առատ Vit. C, կիր, քալսիում: Ունին հականիւթի յատկութիւն, կը կանոնաւորեն աղի քներու գործունէութիւնը, միզամուղ եւ այլն:

Մարդու սնունդը պէտք է ըլլայ բազմազան, քանի որ բանջարեղէնի ամէն տեսակ կը պարունակէ մարմնին անհրաժեշտ որեւէ նիւթ: Որպէսզի բանջարեղէնները աւելի օգտակար ըլլան, պէտք է նկատի ունենալ հետեւեալ կէտերը.-

- Գնել միայն այն քան, որ քան անհրաժեշտ է մի քանի օրուան համար:
- Բանջարեղէններ եւ պտուղներ տեղաւորել սառնարանի մէջ, շուկայէն տուն վերադառնալէ անմիջապէս յետոյ:
- Բանջարեղէնները կտրտել



սուր դանակով, հնարաւորին չափ քիչ վնասելու համար անոնց բջջաթաղանթները, պահպանելով Vit. A եւ Vit. C:

-Անոնք լուալ պաղ ջուրով եւ կտրտել միայն ուտելու կամ եփելու ժամանակ:

-պուրը եռացնել, ապա աւելցնել բանջարեղէնները եւ եփել կափարիչը փակ: Որպէսզի բանջարեղէններու կենսասնութերը պահպանուին, անոնք սառած վիճակով դնել եռացող ջուրի մէջ:

-Եփուած բանջարեղէնները կարելի է ջուրի մէջ ձգել, այդպիսով անոնք կը կորսնցնեն իրենց համը:

-Բանջարեղէնները նախընտրելի է ուտել հում կամ շոգեխաշած, հնարաւորին չափ խուսափել անոնք իւղով կամ ձէթով երկար տապակելէ: Անոնք յաճախ օգտագործել աղցան պատրաստելու:

**ԱՂՅԱՆ** պատրաստելու համար կարեւոր է նկատի ունենալ, որ բաղադրամասերը ըլլան բազմազան, անդարար, ախորժաբեր, ինչպէս նաեւ գեղեցիկօրէն ձեւաւորուած, նախընտրելի է չսեղմել կամ թհարթեցնել գանտնք:

-Թարմ բանջարեղէններով պատրաստուած աղցանները անհրաժեշտ է համեմել ուտելէն անմիջապէս առաջ, աղի պատճառով ան կը կորսնցնէ ոչ միայն իր հաճելի տեսքը, այլեւ օգտակար յատկութիւնները:

-Հում ստեղծիւն աղցանի մէջ օգտագործելու ատեն, անհրաժեշտ է համեմել բուսական իւղով, քանի որ անոր պարունակած քարոթինը կ'իւրացուի օրկանիզմի կողմէ միայն իւղի ներկայութեամբ:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----

## ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ

**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՍՄԱՐ)**

### ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՍՄԱՐ

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈՒՁԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
updated every Friday



### ՊՐԱՒՕ ԱՐՏԱԻԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻՆ

Շաբաթական 7-էն

ուէլեան՝ միջնորդուհի Նեմզարի, Արի Լիպարիտեան՝ սիրահար էտուրտի, Արամ Մուրատեան Միշէլի, Թալին Գալամբարեան՝ Ռոզի, Վագո Նազար՝ Արթին Աղայի, Գրիգոր Սիմոնեան՝ հասարակական գործիչ Փայլակի, Ալին Խանճեան՝ Նուարդի կերպարներուն մէջ վարժ, հաղորդ եւ սահուն խաղարկութիւն մը ցոյց տուին, մէջընդմէջ արժանանալով հանդիսատեսներու բուռն ծափահարութիւններուն: Արդարեւ՝ անոնք զերգանցած էին իրենք զիրենք «Սէր եւ Միծաղ» կատակերգութեան խաղարկութեան մէջ: Յիշենք նաեւ, նոր ուժերու յայտնաբերումը: Յայտնութիւն էին Ա. Կին, Բ. Կին, Գ. Կին եւ Դ. Կին դերերով պարբերաբար բեմահարթակ բարձրացող Նայրիի էմիլիոնեան, Աստղիկ Սինանեան, Ալին պարոնեան եւ Ռաբէլ Բարսեղեան, որոնք իրենց կատարողական խանդավառիչ ներդրումը բերին, ցոյց տալով իրենց սէրն ու նուիրումը հանդէպ հայ թատրոնին:

Վերջին Պրաւոն վերապահեցինք վաստակաշատ դերասան եւ տաղանդաշատ բեմադրիչ՝ Գրիգոր Սաթմեանին: «Սէր եւ Միծաղ» կատակերգութեան փորձերէն մէկուն ներկայ գտնուեցաւ պատահա-

բար: Սաթմեան մեծ թիւով դերասան-դերասանուհիներու գլուխը անցած՝ բեմահարթակէն վար սեղանի մը առջեւ նստած կը հետեւէր բեմին: Մէկ մէկ բեմ կը բարձրանար տեղուց վրայ ցոյց տալու համար իւրաքանչիւր դերասանին կատարելիք ֆիզիքական շարժումները, յօնք-աչք-դէմք ծամածուծութիւններն ու խօսակցական ոլորտներու ձայնային ելեւէջները: Բեմէն՝ վար, վարէն՝ բեմ ելեւէջները վերջ չունէին, միշտ ժպտուն եւ կայտառ: Հմայուած էի իր համբերութեամբ եւ աշխուժութեամբ:

Ժամ մը անցած էր երբ նկատեց ներկայութիւնս: Մեր բաժանման պահուն ըսի իրեն. «Հմայուած եմ համբերատարութեամբդ»: Պատասխանեց. «Վաղուան սերունդը ասոնք են. Մեր բեմը»: Հոկտեմբեր 30-ին, ան արժանացաւ իր թատերական վաստակի ոսկեայ յոբելեանին:

Այդ բարեբաստիկ հրաշալի առիթով, սիրելի գրիգոր, կը շնորհաւորենք քու թատերական վաստակի ոսկեայ յոբելեանդ, քեզի մաղթելով քաջառողջութիւն, արեւաշատութիւն եւ երջանկութիւն, նաեւ՝ բարի երթ՝ դէպի ազամանդեայ յոբելեանդ:

Պատիւս արժանաւորաց:

«ԼՐԱԳԻՐ»

### ԴՐԱՆՔ ԵՆ ՃՆՇՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Շաբաթական 6-էն

խանութեան ներսում տեղի ունեցող ներկայիս զարգացումները: Կարծես թէ ակնյայտ է, որ Հայաստանի որեւէ իշխանութիւն երբեք չի կանգնել պատճառների այդօրինակ լայն համախմբումի առաջ: Հետեւաբար, աննախադէպ այդ իրավիճակում իշխանութիւնն ուղ-

ղակիրտն պարտադրուած է գտնել ինդիւրների նոր լուծումներ, գտնել նոր «գաշնակիցներ», գտնել ինչ որ չափով պատասխանատուութիւն իրացնել ոչ միայն ներիշխանական բեւեռների եւ արտաքին քաղաքական կենտրոնների, այլ նաեւ սեփական քաղաքացիների առաջ:

### ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ

Շաբաթական 14-էն

եւ երթուղայինները ծպպացնում էին, գլուխները տարուբերում: Առանձնապէս «երթուղայինները»: Այդ նոր ծառայութիւնն ստեղծուած է ծովահէնների հետ հանդիպումները կանխելու համար:

Մինչ այդ մենք ուղղուեցինք դէպի Կալկաթա, որտեղ դարերի ընթացքում, ինչպէս եւ ամէնուր, հայերը կառուցել են եկեղեցիներ, դպրոցներ: Հրատարակել են գրքեր ու թերթեր: Կուտակել են կապիտալներ, որոնց տոկոսների հաշուին այսօր Հնդկաստանում գոյութիւն ունեն հենց եկեղեցիներ ու դպրոցներ: Այդ ամէնը մենք գրի առանք, լուսանկարեցինք եւ տեսագրեցինք: Բայց մեր գլխից դուրս չէին գալիս տաղանայալից մտքերն այն մասին, որ «Արմենիայի» սուր թիւ առաջ մի ինչ-որ հրէշաւոր, ահուկի ժայռ է ծառայել: Մենք պէտք է վերադառնայինք Շրի Լանկայի մայրաքաղաք Կոլոմբօ եւ լուծէինք այն հարցը, թէ ինչպէս անցնել, ըստ էութեան, Սցիլլայի ու Քարիբդայի միջով: Կամ պէտք է Մադագասկար կղզու մօտով լողայինք մինչեւ Աֆրիկէյի հարաւային վերջաւորութիւն, հասնէինք Բարեհոս հրուանդան եւ տուն հասնէինք Ջիբրալթարի ու Միջերկրական ծովի միջով: Կամ էլ Քարիբդան՝ առանց պաշտպանական ուղեկցման հասնել Սոմալիի ափեր եւ արդէն ծովային տէրութիւններ ռազմաճակատների ուղեկցութեամբ լողալ մինչեւ Սոմալիի ջրանցք: Մի-աժամանակ մեզ խստիւ ու չոր ասուած էր, որ մինչեւ Կարմիր ծով Արաբականով ընդհանրապէս չի

կարելի գնալ, քանզի Եմենի յեղափոխութիւնից յետոյ այդ շրջանում էլ են ծովահէններ յայտնուել, որոնց քանակն աւելի քիչ չէ, քան Սոմալիում: Մեզ ասացին, որ կայ նաեւ երրորդ տարբերակը՝ ետ վերադառնալ: Այն հարցին, թէ որտե՞ղ ետ, բաւական տրամաբանուած պատասխանեցին, տեղեակ լինելով մեր անցած երթուղուն՝ Սինգապուր, Սիդնեյ, Օկլենդ, Ջատկի կղզի եւ այդպէս շարունակ՝ հակառակ հերթականութեամբ: Ահա այսպիսի սեւ հումոր: Ասել է թէ՛ ուր կ'ուզէք, միայն թէ ոչ Կարմիր ծով Ադենի ծոցով: Կարելի է, իհարկէ, հարցնել, թէ աւելի վաղ, երթուղին մշակելիս ո՞ւր էինք նայում: Չէ՞ որ ողջ աշխարհը գիտէր Կարմիր ծովի շրջանում սոմալիական ծովահէնների վայրագութիւնների մասին: Ամէն ինչ այլ կերպ էր: 2008 թուականի աշնանը մենք հիմնաւորապէս նախապատրաստուել էինք մեր աշխարհաշուրջին: Դեռ այն ժամանակ յայտնի դարձաւ, որ 2008 թուականի Հոկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդն ընդունեց թիւ 1838 որոշումը եւ թույլատրեց բոլոր պետութիւններին ռազմածովային եւ ռազմաօդային ուժեր կիրառել ծովահէնների դէմ պայքարում, կոնկրետ Սոմալիի եւ Ադենի ծոցի շրջանում: Այնպէս որ, մենք հանգիստ էինք, մանաւանդ եթէ հաշուի առնենք, որ շուտով հօգր գործողութիւն անցկացուեց: Ծովահէններին բառացիօրէն ջարխախեցին: Բռնեցին աւելի քան հինգ հարիւր աւազակների:

Շաբաթական 14-էն



**BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY ENGINEERING GROUP**

**NOTICE TO DESIGN BUILDERS & ALL INTERESTED CONTRACTORS & VENDORS, SUPPLIERS, CONTRACTORS & CONSULTANTS**

The Bob Hope Airport hereby extends an invitation to all interested Design Build entities to attend a **MANDATORY** Outreach Meeting for purposes of continuing outreach efforts to all subcontractors including Disadvantaged Business Enterprises (DBE's), Small Business Enterprises (SBE's), Disabled Veteran Business Enterprises (DVBE's), In-Service Disabled Veteran Business Enterprises (IS-DVBE's) and Tri-Cities businesses interested in participating in the upcoming design-build proposal process for Project E10-35-(II). This meeting is mandatory for prospective design-build entities; it is not mandatory for potential subcontractors, subconsultants, vendors, suppliers; however, attendance is strongly encouraged.

**Original Project E10-35; Revised to Project E10-35-(II)**  
**Replacement Parking Structure**

**Project Type & Description:**  
 New Construction – Replacement Parking Structure (RPS)

**Meeting Date & Time:**  
 1:00 P.M. – 2:00 P.M., **NOVEMBER 10, 2011**

**Location:**  
 Bob Hope Airport, Main Terminal, Skyroom  
 2627 Hollywood Way  
 Burbank, CA 91505

(parking is available in the parking structure next to the main terminal, on the roof level only – validation will be provided)

**OUTREACH**

The purpose of this Outreach meeting is to facilitate the process whereby all subcontractors, including DBEs, SBE's, DVBE's, IS-DVBE's and Tri-Cities businesses have the opportunity to interface with potential prime entities that may be proposing on this project.

Subcontractors, Subconsultants, Vendors, Suppliers should expect to leave this meeting with knowledge of this design-build process, a copy of the Request for Proposal, and have had an opportunity to meet prospective prime proposers for this project.

The project is open to all interested design-build entities (architects/general contractors). There are no prequalified firms for this procurement.

Visit Website:  
[www.bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com)  
 Hyperlink:  
 Business Opportunities



**BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY ENGINEERING GROUP**

**NOTICE TO PREQUALIFIED GENERAL CONTRACTORS & VENDORS, SUPPLIERS, CONTRACTORS & CONSULTANTS**

The Bob Hope Airport hereby extends an invitation to the below named Prequalified General Contractors to attend a **MANDATORY** Outreach Meeting for purposes of establishing and/or maintaining communications with all subcontractors, including DBE's, SBE's, DVBE's, IS-DVBE's and Tri-Cities businesses interested in participating in the upcoming bid process for Project E10-35-(I). This meeting is mandatory for the twelve (12) prequalified general contractors to remain eligible to bid the project, but, it is not mandatory for potential subcontractors, vendors, suppliers, consultants; however, attendance is strongly encouraged.

**PREQUALIFIED GENERAL CONTRACTORS**

Austin Commercial	S. J. Amoroso Construction
Bayley Construction	Suffolk Construction
Bernards Brothers	Taisei Construction Corporation
KCS West, Inc.	W.E. O'Neill Construction
McCarthy Building Companies	Walsh Group
PCL Construction	Webcor Builders

**Original Project E10-35; Revised to Project E10-35-(I)**  
**Regional Intermodal Transportation Center (RITC)**  
 (Federally funded; hence federal guidelines apply)

**Project Type & Description:**  
 New Construction – Regional Intermodal Transportation Center Structure, Transit Station, Elevated Walkway, Site Work & Off-Site Work (including Replacement Parking Structure)

**Meeting Date & Time:**  
 10:00 A.M. – 12:00 P.M., **NOVEMBER 10, 2011**

**Location:**  
 Bob Hope Airport, Main Terminal, Skyroom  
 2627 Hollywood Way  
 Burbank, CA 91505

(parking is available in the parking structure next to the main terminal, on the roof level only – validation will be provided)

**OUTREACH**

The purpose of this Outreach meeting is to continue to facilitate the process whereby Disadvantaged Business Enterprises (DBE's), Small Business Enterprises (SBE's), Disabled Veteran Business Enterprises (DVBE's), In-Service Disabled Veteran Business Enterprises (IS-DVBE's) and Tri-Cities businesses have the opportunity to interface with representatives from each of the Prequalified General Contractors. Subcontractors, Vendors, Suppliers should expect to leave this meeting equipped with knowledge of the project, and Pre-Qualified General Contractors bid contact person information, email addresses, fax numbers and phone numbers.

The project has undergone a redesign to fit within budgetary constraints and is targeted for re-bid on November 29, 2011.

Visit Website:  
[www.bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com)  
 Hyperlink:  
 Business Opportunities



### ԱՏԵՆԱՊԵՏ ԵՓՐԵՄ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Յանուն Հաճնոյ Հայրենակցական Միութեան կ'ողջունեմ Ձեր ներկայութիւնը Հաճնոյ Հերոսամարտի 91-րդ Տարեդարձի մատաղօրհնութեան: Երկար տասնամեակներէ ասդին շարունակուող ոգեկոչումի այս հանդիսութիւնները կը ներշնչեն մեզի առաւել եւս հայրենասիրութիւն, պայքարի ոգի եւ պահանջատիրութիւն: Հաճնոյ Հերոսամարտի սուրբ նահատակներուն հոգիները կը սավառնին մեր վրայ եւ կը մղեն մեզ շարունակելու իրենց ընդհատուած հայրենաշինութեան գործը: 101 տարեկան Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը իր ուսերուն վրայ առած այդ պարտականութիւնը, աշխուժօրէն կը ծաւալէ իր գործունէութիւնը ազգային թէ հայրենակցական մարզերէն ներս:



Եփրեմ Պաղպուտարեան

Շուրջ տասնըփնգ տարիներ առաջ մեր միութիւնը որդեգրեց միջնակարգ դպրոց մը Հայաստանի Նոր Հաճըն քաղաքին մէջ: Դպրոցը վերանուանեց Հաճընցի Ազգային Մեծ Հերոս Մեծն Մուրատի անունով եւ անոր կիսանդրին տեղադրեց դպրոցի շրջափակին մէջ: Կատարեց հիմնական նորոգութիւններ, օժտեց կեդրոնական ջեռուցումի սարքերով, համակարգիչներով, Լէյզըր պատճենահան գործիքով եւ նոր գրասեղաններով, ինչպէս նաեւ հոգաց ընթացիկ ծախսերը: Ներկայիս աշխատանք կը տանին դպրոցը օժտելու այնքան անհրաժեշտ բնագիտութեան եւ տարրաբանութեան աշխատանոցներով: Մեր միութիւնը կ'օգնէ համալսարանական հաճընցի ուսանողներու, նաեւ կը հովանաւորէ մշակութային եւ գեղարուեստական ձեռնարկներ:

Այս առիթով կ'ուզեմ մեր խորին շնորհակալութիւնը յայտ-

### ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 91ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ



Մարումակուած էջ 8-էն

նահայ ծանօթ արուեստագէտ լուսանկարիչ Յովհաննէս ձէրէճեան (Փօթօ Շիրազ): Ան իր գնահատանքի խօսքն ուղղելէ ետք օրուան միջոցառումին մասին՝ ոգեկոչեց յիշատակը արծուբոյն Հաճընի քաղաքի ազատամարտիկներուն, որոնք իրենց հերոսական մարտնչումներուն շնորհիւ անցած են անմահութեան շարքին: Յ. ձէրէճեան առանձնապէս յիշեց մեր նոր օրերու հերոսական խիզախ մարտնչումներով ծանօթ Ղարաբաղի ազատագրութեան համար իր յաղթարշաւներով ծանօթ «Մուրատի Գունդ»-ը որ իր դրական բաժինն ունեցաւ Արցախի անկախութեան կերտումի հայրենասիրական մեծ գործին մէջ:

Օրուան գեղարուեստական ճոխ յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին շնորհալի երգիչներ Ժանէթ Գուլումճեան-Իլանճեան, Լեւոն Գաթրճեան եւ Յակոբ Կակոսեան: Ինչպէս նաեւ կիթառիստներ Մարգ Մարգարեան եւ Մուրատ Պասլիք-



Յակոբ Կակոսեան

եան: Յիշատակելի ձեռնարկ մըն էր, որուն համար կ'արժէ շնորհաւորել կազմակերպիչ մարմնի ժրջան անդամները:

Գ. Մ.

### ԱԲԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մարումակուած էջ 8-էն

մաս կազմած է Կիլիկիոյ հայկական պետութեան: Տ. Սարաֆեան դրուատանքով խօսեցաւ հաճընցիներու հերոսական պայքարներուն մասին, որ մղած էին քեմալական զօրքերուն դէմ:

Յարգելի բանախօսը առանձնապէս շեշտեց Հաճընցի ազատամարտիկներ ժիրայր Պոյաճեանի, Մուրատի եւ քրոջ ուսուցչուհի Հայկանուշի սիրազորութիւնները իննամսեայ հերոսական գոյամարտի ընթացքին: Ան մամաւորաբար պանծացուց ազգային մեծ հերոս Աղասիի առասպելական մարտնչումները թրքական գրոհներու դէմ:

Տ. Սարաֆեան դրուատանքով խօսեցաւ Հաճնոյ Հայրենակցական Միութեան բերած բարենպաստ դերակատարութեան մասին թէ սփիւռքի տարբեր գաղթօճախներու եւ թէ Մայր Հայրենիքի մէջ, ուր արդէն տասնեակ տարիներէ ի վեր գոյութիւն ունի Նոր Հաճըն ասանը իր յուշարձանով, կրթական, մշակութային եւ տնտեսական կարեւոր կառուցանքներով:

Տէր Թաղէոս քահանայի «պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ սոյն յիշատակելի հանդիսութիւնը: Ներկաները մեծ ոգեւորութեամբ եւ ազգային հպարտանքով մեկնեցան սրահէն, շնորհաւորելով տիկնանց յանձնախումբի անդամները:

### ՓԱՍՏԱԲԱՆՈՒՅԻ ԼԱՐԱ ԳԱՅԱՅԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Մարումակուած էջ 8-էն

պատմութեան գրքերը, փորձելով մոռացութեան տալ Յեղասպանութեան իրողութիւնը: Այդ մէկը բացարձակապէս անընդունելի է:

Եզրակացնելով, երբ զարգացած երիտասարդ հայեր՝ սոսորուած ազգային գիտակցութեամբ նետուին կեանքի ազգայնէզ եւ համին նախանձելի դիրքերու եւ իշխանութեան, անոնք պէտք է օգտագործեն իրենց դիրքն ու իշխանութիւնը՝ տեղեկացնելու, զարգացնելու եւ մղելու ուրիշներ եւ առնելու քաղաքական եւ տնտեսական անհրաժեշտ քայլեր՝ կարենալ ձեռք ձգելու համար մեր ազգային իրաւունքները:

Թոյլ պէտք է տանք, որ մոռացութեան ենթարկուի ոչ Հաճնոյ Հերոսամարտը եւ ոչ ալ Հայոց Յեղասպանութիւնը: Ընդհակառակը, պէտք է կերտենք քաղաքական ուժ, համերաշխութիւն եւ զօրակցութիւն, որպէսզի, երբ օրին մէկը Հայկական Յեղասպանութիւնը, աշխարհով մէկ արմատաւորուի որպէս պատմական իրողութիւն, նոյնիսկ թրքական կառավարութիւնը ամչնայ եւ ճանչնայ իր գործադրած բոլոր ոճիւղները մեր նախնիներուն հանդէպ, եւ հատուցանէ մեր պահանջները: Այն ատեն, միայն այն ատեն, կրնանք ըսել թէ մեր յաղթանակով վերջ կը գտնէ Հաճնոյ Հերոսամարտը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
 Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանձնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
 հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
 G.Y.O.  
 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 massis2@earthlink.net

**ArmenienInfo.net**  
 News. Informationen. Kommentare.



### ՇՈՒԿԱՆՊԻՍ



ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆ

Հանգուցեալ ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆԻ մահուան քառասուն օրին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Նոյեմբեր 13, 2011ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., յաւարտ Ս. Պատարագի:

Կնդրողներն են՝  
Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւն  
Հայ Մարմնամարզական Միութիւն  
Հանգուցեալի հարազատները

### ՄԱՐԱԶԴ



ՊԵՏՐՈՍ ԱԼԹԸՐԱՐՄԱԳԵԱՆ  
(Ծնեալ՝ Պէյրութ 1938)

Մրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՊԵՏՐՈՍ ԱԼԹԸՐԱՐՄԱԳԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Նոյեմբեր 4ին, 2011ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնները տեղի պիտի ունենան Պէյրութի մէջ, Լիբանան:

Սգակիրներ՝  
Այրին՝ Մակի Ալթըբարմագեան  
Զաւակները՝ Նելլի Ալթըբարմագեան  
Տէր եւ Տիկ. Շահէ եւ Լենա Պասմաճեան  
Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սոնա Ալթըբարմագեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Մեսրոպ Տատուրեան եւ զաւակները  
Տէր եւ Տիկ. Արա Տատուրեան  
Տէր եւ Տիկ. Պարետ Կոստանեան եւ զաւակները

Եւ համայն Կոստանեան, Փայասլեան, Գալէնտէրեան ընտանիքներն ու հարազատները:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱԼԹԸՐԱՐՄԱԳԵԱՆԻ մահուան տխուր առիթով՝ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Մակի Ալթըբարմագեանին, ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:

### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 13-էն

ուածքով: Հանելի էր ներկայացուցող քիչ մը հիւժորով խառն, որ կը հետապնդէր դաստիարակչկան եւ ազգայնականման նպատակներ: Աշակերտները լաւագոյն ձեւով ներկայացան հասկցած եւ ըմբռնած էին նպատակը եւ ճշգրտօրէն ու հարազատ ներկայացուցին, այսօր ամէն բանէ աւելի հրամայական դարձած, այլասերուծի պատկերը:

Հանդիսութեան վերջին բաժինը յատկացուած էր հայկական տարագնորու ցուցադրութեան, որ պատրաստեց Տիկ. Մարօ Գուլումճեան չորրորդ եւ հինգերորդ դասարանի աշակերտներուն համար, ընդգրկեց հայոց պատմութեան Ք.Ա. 190 թուականէն մինչեւ Արցախեան նորագոյն պայքարը եւ ներկայացուցաւ նաեւ պատմական յատկանշական դէմքեր, եւ վերջապէս իրենց մերօրեայ ազատամարտիկներ եւ ֆետայիներ եռագոյն դրօշներով փառաբանեցին Հայաստանի Հանրապետութեան 20-ամեակը, որուն եզրափակիչ խանդավառութիւնը դրսեւորուեցաւ Ծրդ կարգէն Կարօ Մարգարեանի ղեկավարած հայկական մենապարով:

Հանդիսութեան աւարտին խօսք առաւ վարժարանիս տնօրէնուհի քոյր Լիւսիա, որ աշակերտները չորրորդ հայկական մշակոյթով լիցքաւորուելու եւ քաջալերեց զանոնք իրենց տարած աշխատանքին համար: Քոյր Լիւսի-

իա իր խօսքի աւարտին յատուկ կերպով շնորհակարտեց հայերէն լեզուի դասատուները, երաժշտութեան ուսուցչուհիին եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց կատարած ազգանուէր աշխատանքին համար, մինչ ներկաները ծափողջոյններով եւ ծաղկեփունջերով իրենց երախտագիտութիւնը յայտնեցին ուսուցչուհիներուն:

Յաջողեցաւ հայկական բաժանմունքի ծրագիրը, հայրենաւանդ ուսուցչուհիներու յամառ աշխատանքով եւ զօրակցութեամբ տնօրէնութեան, նախակրթարանի ծնողաօժանդակ մարմնին, դասարաններու պատասխանատու ծնողներուն, բոլոր ուսուցիչներուն, մեծ մայրերուն եւ աշակերտներուն, որոնք մեծ բժախնդրութիւն ցուցաբերեցին իրենց վստահութեամբ իրենց կատարեալ ներկայացնելու հանդիսատեսին՝ որ միայն աշակերտներ չէին այլ ծնողներ, հիւրեր, մեծ ծնողներ, նախկին աշակերտներ եւ մեծ բազմութիւն:

Հոս անհրաժեշտ է շնորհակալութիւն յայտնել բոլոր զօրակցողներուն, որոնք քաջալերեցին նիւթապէս, բարոյապէս, աշխատանքով եւ ներկայութեամբ, անգամ մը եւս փաստելով իրենց հաւատքը հայ մշակոյթի անհրահեշտութեաւ եւ հայ դպրոցի առաքելութեան հանդէպ:

Շարունակէ առաքելութիւնը Հայ Մշակի սիւրբ աշխարհի, որ կանգուն մնայ հայ ազգն ու հայրենիքը:



**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**  
Փասատինայի լաւ շրջանի մէջ,  
Washington փողոցի մօտերը 1 սենեակով վարձու տուն  
**Վարձքը \$900 տոլար**  
Մանրամասնութեան համար  
հեռաձայնել (310) 466-7775

**Burbank Airport**  
**Bid Request General Contractors**

Qualified "A" licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 P.M., December 1, 2011 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E11-17, Fiber Optic and Service Equipment Project – Phase 4B. The Work in general consists of, but is not limited to, service equipment installation at Gate 350, Fuel Yard, Police Air Support and the southwest corner of the AOA fenceline. Project shall include all connectors, mounts, accessories, etc. to make service equipment fully functional and ready to incorporate into the Airport security system as described in the plans and specifications. Fiber optic cable installation from Building 36 to the southwest corner of the AOA shall be included. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via website or in person. Bids submitted by firms that have not registered with Airport Engineering will be deemed non-responsive and will not be considered. Call Bobbi Greenspahn at (818) 565-1305 for more information. A pre-bid conference will be conducted on November 16, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505, located at the corner of Sherman Way and Clybourn.





Ճաշկերոյթ  
Պարահանդէս  
Նուիրում

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին  
կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ  
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրում երգիչ՝

Պերճ Նազգաշեան

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011  
երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մանրամասնութեան համար հեռաձայնել

(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00